Ազգ
Azg
28 ԱՊՐԻԼ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 75(4694)
ISSN: 1829-1651

# Կրկնահանցագործությունների թիվը աճել է

Հայաստանում կրկնահանցագործությունների թիվը աճել է. մեկ անգամ դատվածը կրկին հայտնվում է ճաղերի հետեւում: Պատճառները տարբեր են. կալանավայրերում հոգեբանորեն չեն աշխատում կալանավորի հետ, եւ մեծ է հավանականությունը, որ նրանք կդառնան կրկնահանցագործներ: «Կալանավայրերից վերադարձածները չունեն աշխատանք: Նրանց ընտանիքը հետ չի ընդունում: Մարդը կրկին հանցագործություն է կատարում ու վերադառնում կալանավայր», ասում է Իրավաբանների ու հոգեբանների միջազգային ասոցիացիայի նախագահ **Խաչատուր Մարողյանը**:

2008-2009-ին 5000-ով աճել է հանցագործությունների թիվը: Կրկնահանցագործությունը կազմել է 16 տոկոս: Դրանց մեջ հատկապես մեծ թիվ են կազմել անչափահասների կրկնահանցագործությունները: Մարողյանի փոխանցմամբ՝ անչափահաս երեխաների մեջ հանցագործության դիմելը դարձել է մտածելակերպ, տարծանք, հեղինակության ձեռքբերման միջոց: Հանցագործությունների կտրուկ աճ է նկատվում նաեւ կանանց շրջանում: Կանայք հիմնականում դատվում են մարդասպանության, խարդախության կամ թրաֆիկինգի համար:

Կրկնահանցագործությունների պատճառը, ըստ Մարողյանի, օրենսդրական դաշտում ու սոցիալական միջավայրում անհամադրելի կետերն են:

Իրավաբանների ու հոգեբանների միջազգային ասոցիացիան մտադիր է քրեակատարողական հիմնարկներում ծրագիր իրականացնել:

Նպատակն է՝ քրեակատարողական հիմնարկներում իրականացնել աշխատանքային վերադաստիարակում, հետդատապարտության շրջանում կալանավորի ընտանիքի, երեխաների հետ հոգեբանական աշխատանք: «Աշխատանքը կարող է փոխել մարդուն եւ նրա հոգեբանությունը: Այսօրվա պատկերը խոսում է այն մասին, որ հասարակությունը պառակտվում է, մեծանում է անհանդուրժողականությունը: Այս ծրագիրը կարող է օգնել կալանավայրում հայտնվածին վերադառնալ հասարակություն», ասաց ասոցիացիայի հոգեբանների հանձնաժողովի նախագահ **Արմինե Դավթյանը**:

Հ. Հ.

# «Պատրաստ ենք առաջինը լինելու, պատրաստ ենք լիցքաթափման քայլեր կատարելու»

## *Սերժ Սարգսյանն անդրադարձավ իշխանություն-ընդդիմություն հարաբերություններին*

**Իշխանությունների եւ ընդդիմության միջեւ երկխոսության վերաբերյալ երեկ «Վալեքս գրուպ» ընկերությունում լրագրողների հարցին նախագահ Սերժ Սարգսյանը հետեւյալ պատասխանը տվեց. «Իմ մոտեցումները չեն փոխվել, ես համարում եմ, որ քաղաքական գործընթացները մեր երկրում ընթանում են նորմալ հունով կամ գոնե ամեն ինչ գնում է դրան»:**

**Ըստ նախագահի, բավական ակտիվ է խորհրդարանական գործունեությունը, ընդդիմադիր Դաշնակցություն եւ «Ժառանգություն» կուսակցություններն ակտիվացրել են իրենց գործունեությունը: «Կարծում եմ, որ շատ կարեւոր ավանդույթ է ձեւավորվում խորհրդարանում այն առումով, որ քննարկումները թեեւ կոշտ են լինում հաճախ, նույնիսկ հնչում են մեղադրանքներ, այնուհանդերձ այդ քննարկումներն ընթանում են կոռեկտության սահմաններում: Սա շատ կարեւոր հանգամանք է: Եվ կարծում եմ, որ ե՛ւ կոալիցիայի, ե՛ւ խորհրդարանական ընդդիմության կողմից որոշակի ջանքերի ներդրման պարագայում մենք կարող ենք գալ, հասնել քաղաքակիրթ նշաձողի: Սա շատ կարեւոր է», ասաց Սերժ Սարգսյանը:**




**Խոսելով արտախորհրդարանական ընդդիմության գործունեության մասին՝ նախագահը կարեւորեց նրանում նկատվող դրական միտումները: «Ընթանում են հանրահավաքներ, հնչում են ելույթներ, որոնք միտված չեն հասարակության պառակտմանը, որոնք միտված չեն ջարդել-փշրել հասկացողությունները զարգացնելուն, որոնք միտված են քաղաքական պայքարը տեղափոխելուն նաեւ որոշակի հարթակներ: Ինձ դուր է գալիս նաեւ, որ հանրահավաքի կազմակերպիչները եւ ոստիկանները կարողանում են իրար հետ աշխատել եւ, փառք Աստծո, վերջին արդեն տեւական ժամանակահատվածում այդ միջոցառումների ընթացքում չեն գրանցվել հասարակական կարգի կոպիտ խախտումներ», նշեց Սերժ Սարգսյանը, ավելացնելով, որ սա կարող է հնարավորություն ընձեռել, որ Ազատության հրապարակը նորից դառնա Հայաստանի համար, Հայաստանի զարգացման համար այլընտրանքային կարծիքներ հայտնելու վայր:**

**Երկրի նախագահը հիշեցրեց, որ այս տարի լրանում է Հայաստանի Հանրապետության ստեղծման 20-ամյակը, ինչի առթիվ արդեն մեկնարկած միջոցառումները շարունակվելու են ողջ տարվա ընթացքում: «Ուզում եմ նաեւ հիշեցնել, որ մենք բոլորս մտնում ենք մայիս ամիս, մեր ժողովրդի համար հաջողությունների ամիս, հաղթանակների ամիս: Ուզում եմ նաեւ հիշեցնել, որ մենք մայիսին տոնելու ենք նաեւ Հանրապետության օրը: Տոն, որ շատ լուրջ դասերով է լի, եւ այդ դասերն այսօր էլ են արդիական: Պառակտումը երբեք լավ բան չի բերել ոչ մի ժողովրդի, ոչ մի երկրի: Չարությամբ որեւէ տեղ զարգացման խնդիրներ չեն կարողացել լուծել: Եվ մենք բոլորս պիտի կարողանանք չարությանը հաղթել: Իսկ չարությանը կարողանում են հաղթել միայն ուժեղները: Այսօր մենք ունենք ուժեղ իշխանություն, այսօր մենք ունենք ընդդիմություն, որը թույլ չի տալիս իշխանություններին իրենց զգոնությունը թուլացնել, եւ համագործակցելով՝ մենք կարող ենք իրոք մեր երկրին ապահովել լուրջ հաջողություններ: Այստեղ եւս մենք պատրաստ ենք առաջինը լինելու, պատրաստ ենք լիցքաթափման քայլեր կատարելու, եւ ես արդեն հանձնարարել եմ արդարադատության նախարարին՝ տալ առաջարկություններ», եզրափակեց Սերժ Սարգսյանը:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Երեւան է ժամանում ԵՄ հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն

**Այսօր Երեւան է ժամանում ԵՄ ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն: Ըստ ԱԳՆ մամուլի ծառայության՝ նախատեսված են հանդիպումներ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի եւ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Քննարկման նյութը հիմնականում վերաբերելու է Հայաստան-ԵՄ համագործակցությանը:**

# No comment-ը խիստ անբավարար է

Երեկվա «**Ազգի**» համարում «Euronews-ը թուրքերի թեւարկման տակ» խորագրով ռեպլիկի պատասխան-հերքումը, թե Euronews-ը ցուցադրել է Մեծ եղեռնի թեմայով տեսանյութ՝ հղում է կատարում ru.euronews.net/nocomment/2011/04/24/armenia.commemorates-wwi-massacre-ին: Չառարկելով «Առանց մեկնաբանության» տեղեկատվական «բլոկի» կարեւորությունը, միաժամանակ նկատենք, որ 1 ր 52 վրկ տեւողությամբ տեսանյութը, չնայած ցուցադրված կադրերի տպավորիչ լինելուն, միեւնույն է, փոխանցում է ընդհանուր տեղեկություններ, ավելի շուտ՝ տպավորություններ: Առանց տեքստային մեկնաբանությունների, պատկերանյութը, հատկապես պատմական այսպիսի փաստին՝ մարդկության դեմ գործած ամենամեծ ոճրագործություններից մեկին վերաբերող, անհասցե եւ անորոշ է, որովհետեւ լռության է մատնված ցուցադրվածի բուն պատճառը՝ պատմական իրողությունը (ժամանակ, վայր) եւ անհայտ՝ կադրերից մեկի պաստառային գրության «No Genocide»-ի հեղինակ-իրագործողը:

Այնպես որ, ընտրված տարբերակը (no comment), իհարկե, ապահովում է հեռուստաընկերության՝ մի կողմից մասնագիտական մոտեցման պատրանքը, մյուս կողմից՝ իր կարեւոր բաժնետերերից մեկին՝ Թուրքիային չհակադրվելու կամքը:

Մ. Բ.

# Անվճար բուժծառայություններ՝ մայիսի 9-ին ընդառաջ

**«Երեւան» բժշկական կենտրոնը մայիսի 1-ից կանցկացնի ակցիա, որի շրջանակներում զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամներին մատուցվելու են անվճար բժշկական ծառայություններ: Ակցիան անցկացվում է մայիսի 9-ին ընդառաջ, սակայն անվճար ծառայություններից օգտվելու համար հարկավոր է նախապես հերթագրվել: Բժշկական կենտրոնի բուժգծով փոխտնօրեն Բամինե Բաղրամյանը «Արմենպրեսին» տեղեկացրել է, որ 60 հոգի արդեն հերթագրվել են: Ըստ կենտրոնի փոխտնօրենի՝ հերթագրված մարդկանց թվի առումով չկան սահմանափակումներ. «Որքան մարդ գրանցվի, այնքանին էլ կմատուցենք բուժծառայություն»:**

**«Երեւան» բժշկական կենտրոնն արդեն 3-րդ տարին իրականացնում է նման ակցիա: Միայն նախորդ տարի կենտրոնի բուժծառայություններից անվճար օգտվել են զոհված ազատամարտիկների ընտանիքների 300 անդամներ:**

Ի. Պ.

# Հարձակում ոստիկանության աշխատավարձը տեղափոխող մեքենայի վրա

**Երեւանում երեկ՝ ապրիլի 27-ին, ժամը 14-ի սահմաններում զինված անձինք Ծարավ Աղբյուրի փողոցում ավազակային հարձակում են իրականացրել ոստիկանության զորքերի աշխատավարձ տեղափոխող ՎԱԶ-24 մակնիշի ավտոմեքենայի վրա: Հանդիպելով ոստիկանության զորքերի ծառայողների դիմադրությանը՝ դիմել են փախուստի: Դեպքի վայրում քննչական-փորձարարական աշխատանքներ են կատարվում: Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Նոր Նորքի քննչական բաժնում քրեական գործ է հարուցվել Հայաստանի քր.օր.-ի 175 հոդվածի հատկանիշներով (ավազակային հարձակում):**

# ԱՄՆ-ը հստակեցնում է անելիքը տարածաշրջանում

***Երեկ ադրբեջանական լրատվամիջոցները, վկայակոչելով Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզային, տեղեկություն էին տարածել, թե Հարավային Կովկասի երկրներում ներկայացված ԱՄՆ դեսպանների հանդիպում է կայանալու Թբիլիսիում, որի ժամանակ մտքեր են փոխանակվելու տարածաշրջանում ընդհանուր իրավիճակի վերաբերյալ: Հայաստանում ԱՄՆ դեսպանատան լրատվական ծառայությունից այս կապակցությամբ տեղեկացրին, որ «ԱՄՆ դեսպանատների ներկայացուցիչներն այս շաբաթ Թբիլիսիում արդեն իսկ հանդիպել են ԱՄՆ Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով փոխպետքարտուղարի տեղակալ Թինա Քեյդենաուի հետ: Հանդիպման ժամանակ, ըստ տեղեկատվության, քննարկվել են առանձին երկրներին վերաբերող, ինչպես նաեւ տարածաշրջանային այլ հարցեր:***

***Հարավային Կովկասում ԱՄՆ դեսպանատների ներկայացուցիչների հետ հավաքին Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը ներկայացրել է փոխդեսպան Բրյուս Դայնահուն»:***

***Իսկ Բաքվում ԱՄՆ դեսպանն այնուհանդերձ երեկ ժամանեց Թբիլիսի: Բրայզան հայտարարել է, որ հանդիպելու է ԱՄՆ պետքարտուղարի օգնական Թինա Քեյդենաուի հետ՝ քննարկելու «Հարավային Կովկասում Վաշինգտոնի քաղաքականությունն ու հարցերի լայն շրջանակ»:***

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Ավելի վաղ The Financial Times պարբերականը անդրադարձել էր Ադրբեջանից Եվրոպա էներգակիրների տեղափոխման կարեւորությանը եւ այս համատեքստում՝ ընդգծել ԼՂ հիմնահարցի կարգավորման անհրաժեշտությունը: Հոդվածագիրը բառացիորեն ընդգծել էր, որ «ԼՂ հիմնահարցի չկարգավորված լինելը կարող է փչացնել Ադրբեջանից Եվրոպա նոր կառուցվող գազատարի պլանները»: Ամերիկացի հոդվածագիրը նկատում է, որ «Լեռնային Ղարաբաղն այսօր դե ֆակտո անկախ պետություն է, եւ դիվանագետները Բաքվին զգուշացրել են, որ եթե Ադրբեջանը փորձ ձեռնարկի՝ վերադարձնելու կորցրած տարածքները, դրանք անհաջողության կմատնվեն»: Ակնհայտ է, որ ամերիկյան թերթի մեջբերած «դիվանագետները» կարող են լինել միայն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, որոնց՝ տարածաշրջան կատարած հերթական այցից ընդամենը օրեր անց The Financial Tiames-ը հրապարակեց այս հոդվածը:

Եթե առաջնորդվենք զուտ իրադարձությունների ժամանակացույցով, ապա այս հրապարակումից հետո, Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը միակողմանի չեղյալ հայտարարեց ԱՄՆ-ի հետ մայիսի կեսերին նախանշված զորավարժությունները: Նույն ընթացքում Ադրբեջանի Աստարայի շրջանում գտնվող նախագահ Ալիեւը հայտարարեց, որ «օտար ուժերը աշխատում են խաթարել երկրի կայունությունը»: Իլհամ Ալիեւի այս հայտարարությունը անմիջապես կրկնեցին միլիմեջլիսականներ Բահար Մուրադովան, Նովրուզ Մեմմեդովը եւ Օգթայ Ասադովը: Արդարության համար նկատենք, որ «օտար» ուժից Բաքվում դժգոհ են ոչ միայն ԼՂ համատեքստում: Ադրբեջանում իշխանությունը վստահ է, որ ամերիկյան որոշ կառույցներ, նույնիսկ պաշտոնյաներ «գաղտնի հանդիպում են ադրբեջանական ընդդիմության հետ»: Այս վերջինի վկայությունն է ընդդիմադիր Ժողճակատ կուսակցության փոխնախագահ Ֆուադ Գահրամանլիի՝ «Ազադլիգ»-ին տված հարցազրույցը, որտեղ մեկնաբանել է իշխանությունների դժգոհությունը «օտար ուժերից». «Եթե օտար ուժերը իրենց կոչերով չեն ցանկանում Ադրբեջանի զարգացումը, ապա ստացվում է, որ այդ զարգացումը «ցանկացող» այսօրվա իշխանությունները աշխատում են խեղդել դեմոկրատական գործընթացները, թալանել պետական բյուջեն, ոտնահարել մարդու իրավունքները եւ վնասել երկրի հեղինակությունը»:

Տես էջ 2

# Անվճար վիրահատվելու հնարավորություն հայ մանուկներին



«Հայաստանի մանկական ասոցիացան» եւ «Friedensdorf international» («Բարեկամության գյուղ») գերմանական կազմակերպությունն արդեն 20 տարի համագործակցում են, եւ նրանց պայմանագրի շնորհիվ հայ երեխաները տարիներ շարունակ եվրոպական կլինիկաներում անվճար վիրահատվելու հնարավորություն են ստանում: Բայց ընտրվում են այնպիսի երեխաներ, որոնց հնարավոր չէ վիրահատել Հայաստանում: «Խոսքը այնպիսի վիրահատությունների մասին է, որոնք հնարավոր չէ կատարել մեր երկրում կամ էլ կատարվել են անհաջող ելքով», ասում է «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական ՀԿ-ի նախագահ **Վարուժան Սեդրակյանը** եւ հավելում, որ 20 տարիների ընթացքում եվրոպական հիվանդանոցներում արդեն վիրահատվել են 225 հայ երեխաներ: Զրուցակցիս խոսքով՝ երեխաներն ընտրվում են Հայաստանում, հետո մեկնում Գերմանիա. «Իսկ Գերմանիայից էլ արդեն մեկնում են համապատասխան երկիր՝ կախված նրանից՝ եվրոպական ո՞ր կլինիկայում է վիրահատվելու երեխան»:

«Friedensdorf international»-ն աշխատում է աշխարհի 40 երկրների հետ, ստեղծվել է վիետնամական պատերազմի տարիներին եւ իր գործունեության հենց սկզբում օգնել է պատերազմից տուժած երեխաներին: Վարուժան Սեդրակյանը պատմում է, որ գերմանացիներն ի սկզբանե Հայաստան ու Լեռնային Ղարաբաղ էին եկել Արցախյան պատերազմից տուժած երեխաներին օգնելու. «Հետագայում նրանց հետ պայմանագիր կնքեցինք, որ հայ մանուկները Եվրոպա գնան բուժվելու՝ անկախ նրանից՝ պատերազմից տուժել են, թե ոչ»:

Ներկայումս այս ծրագրով Եվրոպայում են 5 հայ երեխաներ, որոնք բացարձակ անվճար բուժում են ստանում: Ժամանակին ծրագրում ներգրավված է եղել նաեւ Ադրբեջանը: Զրուցակիցս պատմում է, որ գերմանական կազմակերպությանն ինքն անձամբ է խնդրել ներգրավել Ադրբեջանին, սակայն վերջինս խախտել է ծրագրի սկզբունքներն ու զրկվել մասնակցությունից. «Ադրբեջանցիների հետ ընդամենը 2 տարի աշխատեցին»: Գերմանացիները նաեւ աշխատել են Ռուսաստանի հետ, սակայն ռուսները պահանջել են, որ ԱՊՀ բոլոր երկրները դեպի Գերմանիա չվերթերը կատարեն Ռուսաստանի միջով, ինչը հանգեցրեց ռուսների ու գերմանացիների միջեւ կապերի խզման, քանի որ «Friedensdorf international»-ը յուրաքանչյուր հանրապետության հետ առանձին է աշխատում:

Այնուհետեւ անդրադառնալով ծրագրի ու գերմանացի մասնագետների սահմանած սկզբունքներին՝ պարոն Սեդրակյանը նշում է, որ պարտադիր ընտրվում են այնպիսի երեխաներ, որոնք բարդ վիրահատության կարիք են զգում, այնպիսի վիրահատության, որը Հայաստանում չի կատարվում կամ էլ այստեղ շատ թանկ արժե, իսկ ծնողները չեն կարող այդքան վճարել: Բարդ վիրահատությունների վերաբերյալ պարոն Սեդրակյանը նշում է, որ դրանք տարբեր են լինում՝ կան գլխուղեղի, ծանր այրվածքների, ներքին օրգանների եւ այլ վիրահատություններ:

Ծրագրի պարտադիր պայմաններից է նաեւ տարիքային շեմը՝ կարող են ընտրվել նորածնային տարիքից մինչեւ 14 տարեկան երեխաները, քանի որ Եվրոպայում անվճար բուժվում են միայն մինչեւ 14 տարեկան երեխաները: Զրուցակիցս ընդգծում է, որ պայմանագրի առաջին կետն էլ վերաբերում է Հայաստան վերադառնալուն. «Երեխան անպայման պետք է հետ գա հայրենիք»: Երեխաները Եվրոպայում մնում են նվազագույնը 6 ամիս, իսկ առավելագույնը՝ ինչքան կպահանջի բուժումը:

Հարցին, իսկ մեզանում երեխաների ընտրությունն անաչա՞ռ է կատարվում, թե՞ կրկին ծանոթ-բարեկամ տարբերակով, Վարուժան Սեդրակյանը պատասխանում է. «Այստեղ ծանոթ-բարեկամ տարբերակը բացառապես չի գործում, քանի որ երեխաներին ընտրում են գերմանացիները: Ինչ վերաբերում է մեծահարուստներին, նրանք գումար էլ ունեն, ճանապարհներն էլ գիտեն, նրանք մեզ չեն դիմում»:

Այս տարի գերմանացիները Հայաստան այցելության ժամանակ ընտրել են 32 երեխաների, սակայն դիմողները շատ են եղել՝ շուրջ 1000 հոգի:

Վարուժան Սեդրակյանն ասում է, որ ամեն տարի գերմանացիների գալուց առաջ ծրագրի վերաբերյալ հեռուստատեսությամբ տեղեկացվում է, տարբեր լրատվամիջոցներով հայտարարություն է արվում: Զրուցակիցս հավելում է. «Եթե հետվիրահատական շրջանում երեխաները դեղերի կարիք են զգում, ապա մինչեւ լիարժեք ապաքինումը «Հայաստանի մանկական ասոցիացան» նրանց ապահովում է դեղորայքով»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՈՒՅԺ

# Վախճանվել է Անդրանիկ Չելեպյանը

**Ապրիլի 12-ին ուքսունինը տարեկանում Սաութֆիլդի իր բնակարանում (Դետրոյթ) վախճանվել է պատմական մի շարք ուսումնասիրությունների հեղինակ դոկտ. Անդրանիկ Չելեպյանը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի ապրիլի 23-ի համարը:**

**Չելեպյանը հայտնի էր հատկապես իր առաջին՝ «Զորավար Անդրանիկ» պատմական աշխատությամբ, որը Հայաստանում հրատարակվեց 1984-ին 75 հազարից ավելի տպաքանակով, եւ որի հասույթը նա հատկացրեց ղարաբաղյան շարժմանը: 1989-ին Հայաստանի պետհամալսարանում նա պաշտպանեց իր դոկտորականը, որից հետո գիրքը թարգմանվեց նաեւ թուրքերեն եւ իսպաներեն:**

**Չելեպյանը ծնվել է Քեսաբում 1922-ին: Ավարտել է տեղի հայ ավետարանական վարժարանը, ուսանել Հալեպի ամերիկյան քոլեջում, որտեղ 1945-1949 թթ. դասավանդել է անգլերեն եւ թվաբանություն: 27 տարի անընդմեջ աշխատել է Բեյրութի ամերիկյան համալսարանի բնախոսության բաժանմունքում: 1977-ին Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքով գաղթել է ԱՄՆ եւ աշխատանքի անցել ՀԲԸՄ Ալեք Մանուկյան վարժարանում:**

**1991-ին հրատարակել է իր երկրորդ գիրքը՝ «Հեղափոխական դեմքեր» խորագրով, որը լույս է տեսել նաեւ անգլերենով դոկտ. Արա Ավագյանի թարգմանությամբ: 1999-ին հրապարակ է հանել իր երրորդ գիրքը՝ «Հայաստանը իսլամի առաջացումից հետո» վերնագրով (անգլերեն): Իսկ 2003-ին՝ չորրորդ գիրքը՝ «Դրոն»:**

# Ոստիկանությունը՝ բարեփոխման ճամփա ընկած



**Երեկ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովը երկրորդ լսումներն էր կազմակերպել ոստիկանությունում բարեփոխումների վերաբերյալ: Չմանրամասնելով՝ փոխանցենք մի քանի արժանահիշատակ արտահայտություններ, որ արել է փոխոստիկանապետ Արթուր Օսիկյանն իր ելույթի եւ մասնակիցների հարցերին պատասխանելու ընթացքում: Ըստ նրա՝ մարտի 1-ի դեպքերն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի բոլոր պահանջները ոստիկանությունը կատարել է, բացի դրանից՝ առաջիկայում հասարակության համար թափանցիկ կլինի ոստիկանության սպառազինությունների ցանկը, այս ցանկի հետ նաեւ հասանելի է հատուկ միջոցների ցանկը՝ հիմք ընդունելով առողջապահության նախարարի եզրակացությունը, ըստ որի կկիրառվեն միայն մարդկանց առողջությանը վնաս չպատճառող հատուկ միջոցները: Մեր ոստիկանների նոր համազգեստներն ունենալու են նաեւ անհատական համարներ, որը թույլ կտա նույնականացնել խախտում թույլ տվող ոստիկանին: Հանրահավաքների եւ երթերի ընթացքի տեսանկարահանում է նախատեսվում: Մարտի 1-ի դեպքերը բացահայտման ակտիվացման՝ նախագահի Սարգսյանի հանձնարարականի մասով Ա. Օսիկյանը նկատեց, թե ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը հանձնարարել է օպերատիվ-հետախուզական նոր միջոցառումներ անցկացնել մարտի 1-ի գործով. «Գործը քննում է հատուկ քննչական ծառայությունը: Ոստիկանության մասով օպերատիվ հետախուզական միջոցառումներ կատարելու եւ այլ հանգամանքներ պարզելու հետ կապված կա նաեւ արդեն ոստիկանության պետի համապատասխան հանձնարարականը: Այս ուղղությամբ աշխատանքները նոր թափ են ստանում, եւ կարծում եմ, այս առումով արդեն իսկ պատշաճ կերպով ծառայություններ ենք իրականացրել»: Լսումների կազմակերպիչներն ու ոստիկանության պաշտոնյաները լսումների ընթացքում հույս հայտնեցին, որ ոստիկանությունում ընթացող բարեփոխումները կբարձրացնեն հասարակության վստահությունը ոստիկանության նկատմամբ:**

Մ. Խ

# ԱՄՆ-ը հստակեցնում է անելիքը տարածաշրջանում

*1-ին էջից*

Որ հատկապես «ազատություն» բղավող 5-ամյա երեխային ձերբակալելու փաստն իրոք վնասում է Ադրբեջանի հեղինակությանը, հաստատ է, միանշանակ է նաեւ, որ Արեւմուտքը բոլորովին էլ երկրորդական պլանում չի դիտարկում Ադրբեջանում ամենաբարձր մակարդակով իշխանափոխությունը: Ինչպես նշում է նույն «Ազադլիգը»՝ անցյալ հոկտեմբերից, Ադրբեջան այցելող ամեն մի դիվանագետ կամ խոշոր գործարար հանդիպում է Քեմալադդին Հեյդարովի հետ: Վերջինս, հիշեցնենք, Ադրբեջանի արտակարգ իրավիճակների նախարարն է... ընդամենը: Սակայն հատկապես տնտեսական ոլորտում ունեցած մեծ ազդեցության պատճառով հարեւան երկրում նրան անվանում են «արտակարգ նախարար»: Վերջինս համարվում է Ադրբեջանում իշխող բուրգի երկրորդ գլուխը՝ Ալիեւ-Փաշաեւներից հետո: Ապրիլի 15-ին, մինչ Բաքվում միակողմանի չեղյալ կհայտարարեր ԱՄՆ-ի հետ զորավարժությունները, դեսպան Բրայզան անձամբ հանդիպեց Հեյդարովին: «Ազադլիգի» տվյալներով՝ «Այս հանդիպումը տեղի է ունեցել ընդդիմադիր «Մուսաֆաթ» կուսակցության շտաբում՝ Բաքվում հավաստարմագրված օտարերկյա դիվանագիտական առաքելությունների ղեկավարների եւ ադրբեջանական ընդդիմության առաջնորդների փակ հանդիպումից անմիջապես հետո, ինչը խոսում է այն մասին, որ Ադրբեջանում Արեւմուտքի ընտրյալը Քեմալեդդին Հեյդարովն է», եզրահանգում է «Ազադլիգը»՝ հավելելով, որ վերջինս առայժմ Ադրբեջանում միակ չինովնիկն է, որը համագործակցում է Արեւմուտքի հետ:

Եթե այս ներքին հարցերին գումարենք նաեւ այն, որ Լեռնային Ղարաբաղը Հարավային Կովկասում միակ «չճանաչված պետությունն է», որին ԱՄՆ-ը կառավարական ամենամյա օգնություն է տրամադրում, ապա հասկանալի կլինի, թե ինչո՞ւ եւ հատկապես ինչի՞ց է դժգոհ Իլհամ Ալիեւը: Հենց այս դժգոհության ֆոնին էլ Ադրբեջանի նախագահը ապրիլի 26-ին ընդունեց Իրանի նախագահի հատուկ բանագնաց Մոհամադ Մեհդի Ահունզադեհին: Այս հանդիպումից հասկանեանալի է ոչ միայն այն, որ նույն օրը Բաքվում էր գտնվում տարածաշրջանային այցով ժամանած ԱՄՆ պետքարտուղարի օգնական Թինա Քեյդենաուն, իսկ ԱՄՆ-ի համար Իրան-այլ երկիր հարաբերությունները արդեն իսկ դժգոհելու առիթ են, այլեւ՝ Ալիեւի եւ Ահունզադեի քննարկած թեման, որը պակաս կարեւոր չէ ԱՄՆ-ի համար: Ադրբեջանի նախագահն ու Իրանի նախագահի հատուկ բանագնացը քննարկել են «Ադրբեջան-Իրան հարաբերությունների եւ Կասպից ծովի իրավական կարգավիճակի հստակեցման հարցեր»: Նույն օրը Բաքվում մերձկասպյան երկրների արտգործնախարարները նույն թեմայով անցկացրեցին խորհրդակցություն: Իսկ Քեյդենաուն ապրիլի 25-ին հանդիպեց արտգործնախարար Մամեդյարովին, քննարկեց՝ ներկա պահին խիստ կարեւոր «ամերիկա-ադրբեջանական հարաբերություններին վերաբերող հարցեր, ինչպես նաեւ ԼՂ խնդիրը»: Երեկ պետքարտուղարի օգնականը ժամանեց Վրաստան, իսկ շաբաթվա վերջին կարճաժամկետ այցով կլինի Երեւանում:

Այս ընթացքում հարեւան երկրում, երբ ակտիվանում եւ «արեւմտյան հովանավորներ» է գտնում ընդդիմությունը, երբ իշխանությունը դժգոհում է Արեւմուտքից եւ ընդդեմ քայլեր ձեռնարկում, հանկարծ Իսրայելը որոշում է կրկին փակել Բաքվում իր դեսպանատունը: Ինչպես սարկազմով նկատել է ադրբեջանական Pia.az կայքը՝ «Բաքվում Իսրայելի դեսպանատանն աշխատում է միայն «ավտոպատասխանիչը»: Թել Ավիվը իր այս հերթական քայլը կրկին պատճառաբանել է Բաքվում ահաբեկչության վտանգով:

Ինչեւէ, մինչ ադրբեջանական ընդդիմության առաջնորդների հետ հանդիպումից հետո դեսպան Մեթյու Բրայզան այցելեց Նախիջեւան եւ հետաքրքրվեց հայկական խաչքարերով, իսկ հետո ամերիկյան դեսպանատունը հայտարարություն տարածեց, թե «դեսպանին տեղական իշխանությունները թույլ չեն տվել այցելել Ջուղայի հայկական խաչքարերի գերեզմանոց...», մինչ Ադրբեջանի Ժողովրդավարության եւ խաղաղության ինստիտուտի տնօրեն Լեյլա Յունուսն ահազանգում է, որ երկրում քաղբանտարկյալների թիվն անցնում է 6 տասնյակը, եւ միջազգային իրավապաշտպան Freedom House-ի գնահատականով՝ Ադրբեջանում իշխանությունները հնարավորինս վերահսկում են ԱՄՆ նախագահի «այդքան գնահատած» համացանցը, ինչպես ավելի վաղ նշել էին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, նրանք ապրիլի վերջին կմեկնեն Վաշինգտոն՝ «ԼՂ հիմնահարցով խորհրդատվություններ անցկացնելու ԱՄՆ կառավարության պաշտոնատար անձանց հետ»: Կլինի՞ «օտար ուժերից» ավելի դժգոհ Իլհամ Ալիեւը այս խորհրդակցություններից հետո՝ հավանաբար, քանի որ Արեւմուտքում, դեռեւս առաջատար լրատվամիջոցների մակարդակով միայն, նրան բազմիցս են հիշեցնում, որ աթոռը, որին նստած է, ժառանգել է հորից: Իսկ նմաններին կոնկրետ ԱՄՆ-ում «երկար չեն հանդուրժում»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հանքարդյունաբերողները պատրաստ են կրկնապատկելու արտադրության ծավալները

*Սակայն պղնձաձուլարանի կառուցումը դեռ տնտեսապես շահավետ չէ*

«Վալեքս գրուպում» Հայաստանի խոշոր հանքարդյունաբերական ընկերությունների ղեկավարների հետ հանդիպեց Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը: Հանդիպման ժամանակ քննարկված հարցերի մասին լրագրողներին պատմեցին պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» նախագահ Մաքսիմ Հակոբյանը, «Վալլեքս գրուպի» նախագահ Վալերի Մեջլումյանը, վերջում նաեւ Նախագահ Սերժ Սարգսյանը:



Ըստ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանի, քննարկման նպատակն էր խոշոր հարկատուներին ներկայացնել հարկային եւ մաքսային համակարգում կատարվող փոփոխությունները եւ համագործակցության եզրեր գտնել նրանց հետ: ՊԵԿ-ի նախագահը ընդգծեց, որ այս տարի խոշոր ընկերությունների շրջանառությունն ավելացել է 85 մլրդ դրամով, իսկ վճարած հարկերը՝ 7,7 մլրդ դրամով: Այս տարվա առանձնահատկությունն այն է, որ գերավճարների հետ վերադարձման մեխանիզմն է գործելու: Գագիկ Խաչատրյանը նաեւ հայտնեց, որ հանքարդյունաբերական ընկերությունների հետ պայմանավորվել են, որ հարկահավաք մարմնի համար կանխատեսելի լինեն հարկային մուտքերը, իսկ բիզնեսի համար՝ վճարումները:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» նախագահ Մաքսիմ Հակոբյանը տեղեկացրեց, որ քննարկվել են բնօգտագործման վճարների հետ կապված օրենսդրական փոփոխությունները: Համաձայն դրանց, բնօգտագործման վճարները կավելացվեն, ավելի բարձր շահույթ ստացող ընկերությունն ավելի շատ կվճարի: Ինչ վերաբերում է պղնձաձուլարանի կառուցման նախագծին, ապա Մաքսիմ Հակոբյանը նշեց, որ արդյունահանման ներկա ծավալների պայմաններում պղնձի վերամշակման գործարանի կառուցումը տնտեսապես շահավետ չէ: Դրա համար անհրաժեշտ է արդյունահանման ծավալները տարեկան հասցնել 60-80 հազար տոննայի: Այդ ցուցանիշին մեր պղնձարդյունաբերական ձեռնարկությունները կհասնեն մի քանի տարի հետո:

«Վալլեքս գրուպի» նախագահ Վալերի Մեջլումյանն անդրադարձավ Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրին, ասելով, որ այն էապես կավելացնի Հայաստանում պղնձարդյունաբերության ծավալները: Բնապահպանական խնդիրների վերաբերյալ տրված հարցին, նա պատասխանեց, որ ընկերությունում բնապահպանական հարցերով զբաղվող բաժին կա, եւ իրենք համագործակցում են բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նա նաեւ պատմեց «Վալլեքս գրուպի» ներդրումային ծրագրերի մասին:

Երկրի Նախագահ Սերժ Սարգսյանը լրագրողներին ասաց, որ հանքարդյունաբերությունը մեր երկրի տնտեսության կարեւոր ճյուղերից մեկն է, եւ այստեղ է մեր խոշոր արտադրողների մի մասը: Նա ընդգծեց, որ ինքը ցանկացել է այս ոլորտի ներկայացուցիչներին անձամբ հավաստիացնել, որ պետության նպատակները լուրջ են հարկային եւ մաքսային բարեփոխումների ծրագրի իրագործման ուղղությամբ, որոնք միտված են պարզեցնելու ընթացակարգերը եւ ազատելու հարկատուներին ավելորդ հոգսերից: Սակայն դա չի նշանակում, որ իջեցվելու են հարկային դրույքաչափերը, քանի որ «մենք չենք կարող չվճարել սոցիալական, կրթության, առողջապահության, պաշտպանության ծախսերը: Չենք կարող թոշակներ եւ աշխատավարձներ չվճարել կամ վճարել ուշացումներով: Մենք դա ուղղակի բացառում ենք»:

«Զրուցել ենք նաեւ զարգացման ծրագրերի շուրջը: Մոտակա 3-3,5 տարիներին հանքարդյունաբերական ընկերությունները պատրաստ են կրկնապատկել իրենց արտադրության ծավալները, ինչը նշանակում է կրկնապատիկ ավելի հարկային մուտքեր, լրացուցիչ աշխատատեղեր եւ ուղեկցող արտադրություններ», եզրափակեց Սերժ Սարգսյանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# Ջրբաժանը հետաձգվում է

ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը ստիպված պետք է հետաձգի իր հայտարարած «ջրբաժանը», քանի որ ստիպակներով խաղացող Նախագահ Սարգսյանը մի քայլ առաջ ընկավ եւ կարողացավ այնպես անել, որ այսօր ՀԱԿ-ականներն իրենց համակիր միտինգավորներին տանելու առիթ չունենան. նրանց մնում է երկու տարբերակ՝ կամ ավելի կոշտացնել պահանջները, նախ նշելով փոքրիկ հաղթանակը իշխանության հանդեպ՝ իրենց երեք պահանջների փուլային տարբերակով կատարման առումով. այս դեպքում ՀԱԿ-ը թեեւ գիտե, որ հերթական ընտրությունների է գնում, բայց կշարունակի պահանջել արտահերթ ընտրություններ, մի երկու հանրահավաքում էլ ձեւ կանի, թե կոշտանում է՝ մինչեւ իրենց պահանջների վերջնական կատարում: Իսկ հետո ամառ կլինի ու մինչեւ սեպտեմբեր շունչը հետ բերելու ու հետագա նոր մարտավարություն շահելու ժամանակ կունենա:

Երկրորդ տարբերակով, ինչն իրականությանն ավելի մոտ կլիներ, Տեր-Պետրոսյանը պետք է ընդունի, որ Սերժ Սարգսյանն, այո, մտահոգված է հասարակության պառակտման առումով, ընդունում է իր եւ ուրիշների բացթողումներն ու սխալները եւ առաջինն ինքն է քայլ անում լիցքաթափման ուղղությամբ. «Պառակտումը երբեք լավ բան չի բերել ոչ մի ժողովրդի, ոչ մի երկրի: Չարությամբ որեւէ տեղ զարգացման խնդիրներ չեն կարողացել լուծել, եւ մենք բոլորս պետք է կարողանանք չարությանը հաղթել: Չարությանը կարողանում են հաղթել միայն ուժեղները: Այսօր մենք ունենք ուժեղ իշխանություն, ունենք ընդդիմություն, որը թույլ չի տալիս իշխանություններին՝ իրենց զգոնությունը թուլացնել, եւ համագործակցելով մենք կարող ենք մեր երկրին ապահովել լուրջ հաջողություններ: Այստեղ եւս մենք պատրաստ ենք առաջինը լինելու, պատրաստ ենք լիցքաթափման քայլեր կատարելու, եւ ես արդեն հանձնարարել եմ արդարադատության նախարարին՝ տալ առաջարկություններ». Նախագահ Սարգսյանի այս խոսքին հակադրելու բան կարծես թե ՀԱԿ-ը պիտի չունենար: Սակայն մեր ասած երկրորդ տարբերակը խոստովանելու դեպքում՝ ՀԱԿ-ի առաջնորդը պիտի որ մտավախություն ունենա, որ միտինգավորները չեն հասկանա իրեն, քանի որ երկխոսությունն իշխանության ու ՀԱԿ-ի միջեւ դեռ չի նշանակում երկխոսություն հասարակության բողոքավոր զանգվածի եւ իշխանության միջեւ (տես մեր նախորդ օրվա հրապարակումը): Բացի այդ՝ սա կնշանակի ՀԱԿ-ի արժեզրկում սեփական համակիրների աչքում: Էլի բացի այդ՝ ոչ ոք չգիտե, թե այս բոլորին ինչպե՞ս կարձագանքեն ընդդիմադիր մյուս միավորները՝ «Ժառանգությունը», ՀՅԴ-ն, մյուս մանր-մունր կուսակցությունները: Այս երկրորդ տարբերակը խոստովանելու դեպքում ՀԱԿ-ին կմնա իշխանության հետ երկխոսության դետալները քննարկել՝ ընտրելու համար մարտի 1-ի դեպքերի քավության նոխազներին, բանտարկյալների ազատման ժամանակացույց մշակել, իսկ դե միտինգն Ազատության հրապարակում ամեն օր կարող են անել, եթե ուզենան: Բայց ի՞նչ են ասելու տեսնես բերանը բաց եւ դեռ մի միտինգ առաջ «հիմա, հիմա» գոչող իրենց համակիրներին... Բոլոր դեպքերում՝ այսօր Տեր-Պետրոսյանի առջեւ ծանր խնդիր է դրված՝ այնպիսի պահվածք որդեգրել, որ ո՛չ իր համակիրներին չխրտնեցնի, ո՛չ Նախագահ Սարգսյանի քայլը չնսեմացնի, եւ ինքը չարժեզրկվի: Մի խոսքով՝ ոչ շիշը վառվի, ոչ խորովածը: Դժվարին խնդիր...

Իսկ Նախագահ Սարգսյանի դիրքորոշումների առաջին քաղաքական արձագանքները երեկ դրական էին, որոնց մեջ գերիշխում էր համոզմունքը, որ ՀԱԿ-ի սպառնալիք-ջրբաժանն այսօր չի լինի: Անաչառ դիտարկողները, սակայն, կարող են արձանագրել, որ, այնուամենայնիվ, շատ կարեւոր իրադարձություն տեղի ունեցավ երեկ Նախագահ Սարգսյանի տեսակետների հանրայնացմամբ, եւ մեր հասարակական կյանքի ընթացքը գոնե առայժմ մի փոքր գուցե առողջանա:

Մնացյալը կդիտարկենք հընթացս:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Բնապահպանության նախարարությունում աչք են փակում կենդանիների սովամահությանը եւ անազատությանը

Հրազդանի կենդանաբանական այգին քաղաքի ծայրամասում է:

2000 քառակուսի մետր տարածք զբաղեցնող այգին գործում է 1993-ից. այգում պահվում է 20 տեսակի շուրջ 40 կենդանի՝ գայլեր, առյուծ, սողուններ, ծովախոզուկ, կովկասյան գորշ արջ, որը գրանցված է կարմիր գրքում՝ որպես անհետացող կենդանի:

Որ այս կենդանաբանական այգին որեւէ կերպ չի համապատասխանում կենդանաբանական այգիների համար ընդունված չափորոշիչներին, փաստում է հենց տնօրենը՝ **Արմենակ Ավետիսյանը**: «Հենարան» մամուլի ակումբում նա պատմում էր, որ սուպերմարկետներից ժամկետանց կերակուր է գնում, «ռեստորաններում կամ թաղման տեղերում մնացած ուտելիքն եմ բերում: Պատահում է, որ քաղաքում մարդիկ խաշ են պատրաստում, ես գնում եմ, էդ մաքրածը բերում, որ կենդանիներն ուտեն»:

Թե ինչպես է ստացվել, որ քաղաքապետարանը 1993թ. թույլատրել է այգու գործունեությունը՝ հայտնի չէ: Մինչ նման գործունեություն ծավալելու իրավունք տալը անհրաժեշտ էր կենդանաբանական այգիներում ստուգում կատարել. վանդակների չափը համապատասխանո՞ւմ է ընդունված չափորոշիչներին, կենդանիները բուժզննում անցնո՞ւմ են, ապահովվո՞ւմ է կենդանիների սնունդը: Միայն այս հարցերի պատասխանը ստանալուց հետո քաղաքապետարանի համապատասխան վարչության պետը պետք է փաստաթուղթ ստորագրեր:

Ամենայն հավանականությամբ քաղաքապետարանը տարածքը տրամադրելուց կա՛մ չի իմացել այս չափորոշիչների մասին, կամ էլ մտածել է՝ եթե Հայաստանում խախտվում են մարդու իրավունքները, ապա ինչո՞ւ չպետք է խախտվեն կենդանիներինը:

Հրազդանի կենդանաբանական այգու տնօրենը փաստում է՝ կենդանիները բժշկական որեւէ զննում չեն անցնում: Տարեկան մեկ անգամ նրանց պատվաստում է Ավետիսյանը: Բժշկական համապատասխան կրթություն չունի, բայց, իր խոսքերով, ունի մեծ փորձ:

Այս ձմեռ Հրազդանի կենդանաբանական այգում սատկել է 10 ծովախոզուկ: Վտանգված է առյուծի, արջի, գայլերի, սողունների, կրիաների ու շների գոյությունը: Տարիներ շարունակ կենդանաբանական այգու ֆինանսական հարցերը լուծել է այգու կարիկը՝ Մադամը: Կապիկին Ավետիսյանը խաղացնում էր, երգացնում, պարացնում ու նկարում՝ ստացված գումարով հոգում այգու կարիքները:

Մադամը սատկեց, ու կենդանիները հայտնվեցին սովամահության եզրին: Ավետիսյանն ասում է, որ կենդանիներին պահելն իր հոբբին է, ու հավելում է՝ իրեն օրական 40.000 դրամ է անհրաժեշտ՝ կենդանիների կարիքները հոգալու համար:

Անցյալ տարվա նոյեմբերին այգու առյուծը հարձակվել էր աշխատողներից մեկի վրա: Թեպետ լուրեր էին տարածվել, որ սովածությունից գործել է կենդանական բնազդը, սակայն տնօրենն ասում է, որ այգու աշխատողը սխալ է վարվել ու փորձել կենդանու ռեակցիան: «Ոտքով անընդհատ հարվածել է ճաղերին. դրա համար էլ կենդանին կատաղել է»:

Վերնշյալ օրինակն էլ փաստում է, որ նմանատիպ այգիներում կենդանիների գոյությունը վտանգված է:

Սա հանրապետությունում գործող միակ «ինքնուս» կենդանաբանական այգին չէ, որ սարսափելի վիճակում է: Ահավոր է վիճակը նաեւ Արմավիրի կենդանաբանական այգում: Որեւէ մոնիտորինգ չի կատարվել՝ պարզելու, թե հանրապետությունում քանի նման կենդանաբանական այգի է գործում:

«Նորմալ» երկրներում վաղուց կարգելվեր նման այգիների գործունեությունն, ու այգու տնօրեններն ու քաղաքապետարանի համապատասխան վարչության ներկայացուցիչները տուգանքի կենթարկվեին: Հայաստանում այդ ուղղությամբ առայժմ ոչինչ չի ձեռնարկվում:

Օրենսդրությամբ ինքնուս գործունեության ծավալումն ու կենդանիների շահագործումն անօրինական ձեւով դատապարտվում է:

«Կան շատ լավ օրենքներ, որոնք ուղղակի չեն կատարվում: Չմտածեք, որ մենք օրենք չունենք, դրա համար էլ իրավիճակն այսպիսին է: Կան կենդանիների վաճառքի մասին օրենք, կարմիրգրքային կենդանիների պաշտպանության մասին օրենքներ, սակայն դրանք չեն կիրառվում: Խնդիրը պետք է այստեղ փնտրել: Խոսրովի արգելոցում մարդկանց թույլ են տալիս, որ գնան որս անեն, գիտեն, որ այս կամ այն օլիգարխը վայրի կենդանիներ է պահում, բայց ոչինչ չեն ձեռնարկում», «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց «Թռչնասերների» ՀԿ-ի նախագահ **Սիլվա Ադամյանը**:

«Գործում են կենդանական աշխարհի, բնապահպանական վերահսկողության, բնապահպանական իրավախախտումների հետեւանքով կենդանական եւ բուսական աշխարհին մասնցած վնասների սակագների մասին օրենքներ: Վայրի կենդանիներին անազատության մեջ պահելն էլ առանց համապատասխան թույլտվության արգելվում է», օրենքներն է թվում բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության ավագ **Արթուր Բեգլարյանը**՝ հավելելով, որ կենդանական աշխարհի մասին օրենքով վայրի գիշատիչ կենդանիները պետք է հաշվառվեն: Հաշվառման կարգը հաստատում է կառավարությունը, սակայն կարգ դեռեւս չի սահմանվել:

Բնապահպանական տեսչությունը գործառույթներ չունի Հրազդանում կամ Արմավիրում ինքնուս կենդանաբանական այգիների գործունեությանն ազդելու համար: «Մեր վարույթի տակ չէ: Այդ հարցերը կարգավորում են մարզպետարանները»:

Վերջերս նախարարության աշխատակիցները կարմիր գրքում գրանցված գառնանգղ տեսակի թռչուն են հայտնաբերել Տավուշի մարզում: Թռչունն առգրավված է ու գտնվում է կենդանաբանական այգում:

«Եթե թռչունի վիճակը լավանա, բաց կթողնենք, եթե ոչ՝ վարչական կամ գուցե նաեւ քրեական պատասխանատվության կենթարկվի գառնանգղ որսացողը»: Բնությանը պատճառած վնասը տեսչությունը գնահատել է 250.000 դրամ:

Բեգլարյանը հավաստիացնում է, որ տեսչությունը ուշադիր հետեւում է ու արգելում, որ վայրի կենդանիները պահվեն անազատության մեջ: Այս պարագայում հարց է առաջանում, մի՞թե նախարարության աշխատակիցները տեղյակ չեն, որ բազմաթիվ պատգամավորներ, օլիգարխներ իրենց դղյակներում սեփական կենդանաբանական այգիներ են կառուցել ու պահում են հազվագյուտ վայրի կենդանիներ:

Այդ նույն օլիգարխներն իրենց կառուցած ռեստորաններում կամ հյուրանոցներում, փոքր վանդակներում վայրի կենդանիներ ու մասնավորապես արջ են պահում: Օրինակ, ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը բազմիցս հայտարարել է, որ ունի երկու տասնյակ առյուծներ ու վագրեր: Ծառուկյանի առյուծների մասին բազմաթիվ տեսագրություններ կան youtube.com կայքում:

«Մենք Տավուշի մարզի բնակչի նկատմամբ վարչական վարույթ կիրառել ենք, որովհետեւ նա հենց բնությունից է վերցրել ու պահել, իսկ եթե Ծառուկյանը կամ մնացած պատգամավորները օրինական ճանապարհով են ձեռք բերել ու մյուս կենդանաբանական այգիներից՝ վերարտադրության պատճառով, ապա նրանց հանդեպ պատժամիջոցներ չենք կարող ձեռնարկել»:

«Ճշտե՞լ եք՝ այդ վայրի կենդանիներն օլիգարխներն ի՞նչ ճանապարհով են ձեռք բերել» հարցին նախարարության աշխատակիցը պատասխանեց լռությամբ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳ

## Ողջակիզում

# Թուրք գրողը Պրահայում խոսել է նաեւ ցեղասպանության մասին

*Ապրիլի 24-ը Չեխիայում. պատարագ, երեկո, ցուցահանդես*

Չեխական aktualne.cz ինտերնետային կայքէջին տված հարցազրույցում թուրք հայտնի գրող Նեդիմ Գյուրսելը հայտարարել է, որ ինքն այն մարդկանցից է, ով ստորագրել է այն խնդրագիրը, որով Թուրքիայի իշխանություններից պահանջվում է ներողություն խնդրել՝ ճանաչելով հայերի դեմ իրականացրած սարսափները: Թուրք գրողը, որ Պրահայում մասնակցում էր գրողների 21-րդ փառատոնին՝ ներկայացրել է նաեւ չեխերեն լույս տեսած իր «Ալլահի աղջիկները» գիրքը: Նա նշել է նաեւ, որ հայկական կոտորածների թեման Թուրքիայում տաբու է դարձել Աթաթուրքի իշխանության գալուց հետո, երբ Առաջին համաշխարհային պատերազմի հետ կապված շատ թեմաներ լռության մատնվեցին: Նա նշում է, որ հիմնական բանավեճը ցեղասպանություն բառի շուրջն է, որին դեմ են իրենց պատմաբանները, եւ որ հայերն ունեն նաեւ իրենց անվանումը՝ «Մեծ ողբերգություն» («Մեծ Եղեռն»):



Իր հերթին չեխական prvniz-parvy.cz էլեկտրոնային կայքը անդրադարձել է հայերի ցեղասպանության 96-րդ տարելիցին՝ մեջբերելով Հայաստանի նախագահի ապրիլքսանչորսյան ուղերձից մի հատված, որում ասվում է, թե շարունակվելու է ցեղասպանության միջազգային ճանաչման ընթացքը: Հայոց ցեղասպանության ճանաչման 96-րդ տարելիցին է անդրադարձել նաեւ SYSTEM OF A DOWN ամերիկյան խմբին նվիրված չեխական կայքէջը, նշելով, որ այդ օրն իրենց հայտնի է իբրեւ Հայոց ցեղասպանության օր: Այդ կապակցությամբ «Սիստեմի» բոլոր չեխ երկրպագուներին մեծ նվեր են մատուցել՝ ներկայացնելով Կարլա Կարապետյանի «Ճչացողները» հայտնի ֆիլմի չեխերեն թարգմանությունը: Իսկ չեխահայության կազմակերպած միջոցառումներին նախապես անդրադարձել է Չեխական ռադիոն:

Այս ապրիլի 24-ին չեխահայությունը, ինչպես եւ մյուս հայկական համայնքներում, նշեց Քրիստոսի Հարության տոնը եւ Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը: Պրահայի Սուրբ Յիլիի եկեղեցում Հայ եկեղեցու Չեխիայի հոգեւոր հովիվ **Բարսեղ վարդապետ Փիլավչյանի** հանդիսապետությամբ մատուցվեց պատարագ: Այնուհետեւ քաղաքային գրադարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված երեկո: Իր բացման խոսքում «Արմենիա ակումբ» կազմակերպության նախագահ **Տիգրան Աբրահամյանն** անդրադարձավ Չեխիայում հայկական հարցի պատմությանը՝ գրող եւ ճանապարհորդ Կարել Հանսայի կատարած աշխատանքից սկսած մինչեւ 2006-ին Չեխիայի Սենատում կազմակերպված միջազգային գիտաժողովը, որն անցկացվեց Չեխիայի Սենատի անդամ **Յարոմիր Շտետինայի** հովանավորությամբ: Վերջինս այս տարվա երեկոյին չէր մասնակցում հիվանդության պատճառով: Այնուհետեւ ներկաներին ողջունեց Չեխիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար **Դավիթ Ղուկասյանը**, որը կարեւորեց ցեղասպանության ճանաչումը Չեխիայի կողմից, համոզմունք արտահայտելով, որ դա անպայման տեղի է ունենալու:

Չեխահայության հոգեւոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավչյանը իր խոսքում շեշտեց, որ «Այսօր մենք չենք եկել սգալու, այլ մեր քրիստոնեական հավաքականությամբ, մեր գոյությամբ, մեր ստեղծագործ եւ արարող մտքով չարին ցույց տանք, որ երբեք նման կերպով չեն կարող բարին ու լավը վերացնել աշխարհից: Մի ժողովուրդ, որ հարության խորհուրդն ունի իր մեջ, չի կարող մահանալ»: Այնուհետեւ ընթերցվեց չեխական կաթոլիկ եկեղեցու առաջնորդ, Պրահայի արքեպիսկոպոս Դոմինիկ Դուկայի նամակը, որով իր զորակցությունն էր հայտնում ցեղասպանություն ապրած հայ ժողովրդին եւ շնորհավորում սուրբ Զատկի տոնի առիթով:

Ներկաները համակ ուշադրությամբ դիտեցին հեռուստալրագրող **Արսյոմ Երկանյանի** «Թոռների պատասխանը» ֆիլմը, որը պատմում էր Թուրքիայում Հայոց ցեղասպանությունը ընդունող թուրք մտավորականության մասին:

Այնուհետեւ երեկոյի համերգային բաժնում ելույթ ունեցավ «Մուզիկա պոետիկա» չեխական երգչախումբը՝ հայ հոգեւոր շարականների կատարմամբ, պատանի դաշնակահար Սոնա Քոլոյանը կատարեց Ռախմանինովի «Էլեգիան», ջութակահարներ Արմեն Սարգսյանն ու Աննա Համբարձումյանը՝ «Ամպել ա» եւ «Ալ այլուղս» գործերը, Վարինե Մկրտչյանը երգեց «Կռունկն» ու «Կիլիկիան»: Համերգը եզրափակեց դաշնակահար Վազգեն Վարդանյանը՝ Բաբաջանյանի «Վաղարշապատի պար»-ի եւ Լիստի 15-րդ հունգարական ռապսոդիայի վիրտուոզ կատարմամբ:

Սուրճի հյուրասիրությունից հետո ներկաներն անցան Հուսովա 8 հասցեում գտնվող Մարիամ եւ Հրայր Ղարիբյանների ցուցասրահ, ուր բացվեց հայ եւ օտար նկարիչների ցուցահանդեսը, ինչպես նաեւ ներկայացվեցին զատկական մեծ ձվեր՝ նախշազարդված հայ նկարիչների կողմից:

Միաժամանակ «Ուրարտու» հայ-չեխական կազմակերպությունը Յիհլավա քաղաքում կազմակերպել էր միջոցառումներ՝ նվիրված սուրբ Զատկի տոնին եւ ցեղասպանության զոհերի հիշատակին, այդ թվում՝ նկարչական աշխատանքների ցուցահանդես հայկական «Խաչքար» հուշարձանի մոտ:

**Հ. ԱՄԱՏՐՅԱՆ**
**Պրահա**

## ՀԱՄԱՌՈՏ

# Ցոյց Բեռլինում

**Ցեղասպանութեան 96-ամեակի կապակցութեամբ ցոյց-յուշապահակ տեղի ունեցաւ Բեռլինի թրքական գլխաւոր հիւպատոսարանին կից եւ ոգեկոչման երկու միջոցառումներ՝ այլուր:**

**Որը տեղի ունեցաւ շաբաթ՝ 23 ապրիլ 2011-ին, ժամը 14-16-ը, շուրջ 70 մասնակիցներով Բեռլինի եկեղեցական եւ մշակութային միութիւնների անդամներով, ինչպէս նաեւ Բեռլինում ուսանող հայաստանցի ուսանող-ուսանողուհիներով:**

**Ցոյցը կազմակերտել էր «Ճանաչում աշխատանքային խումբ»-ը: Յուշապահակին ներկայ էին նոյն խմբի նախագահ տիկ. դոկտ. Թեսա Հոֆմանը, դոկտ. Մարտին Ռունին (Արմին Տէոֆիլ Վեգների կենսագիրն եւ մասնագէտը) Բրեմն քաղաքից եւ Սողոմոն Թէհլիրեանի դատավարութեան բեմադրիչ Հայնց Բեօքէն:**

**«Դուր դէ» թրքական կազմակերպութեան Բեռլինի մասնաճիւղը, որը այս տարի Թուրքիայի մի քանի քաղաքներում ցեղասպանութեան 96-ամեակի կապակցութեամբ միջոցառումներ է անցկացրել, ներկայ գտնուեց յուշապահակին մի յայտարարութեամբ եւ պատասխանեց յուշապահակի մասնակիցների հարցերին:**

**Յուշապահակի ընթացքում իր խօսքն ուղղեց մասնակիցներին ինչպէս նաեւ Թուրքիայի իշխանաւորների հասցէին դոկտ. Մարտին Ռունին:**

**Կիրակի՝ 24-ին, յետմիջօրէյին հոգեհանգստեան պատարագ մատուցեց Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արք. Պեքճեանը:**

**25 ապրիլին, Բեռլինի ֆրանսիական կաթողիկէում Հայոց ցեղասպանութեան զոհերին նուիրուած յուշերեկոյի գլխաւոր բանախօսն էր գրող-հրապարակախօս դոկտ. Ռալֆ Ջիորդանոն:**

Դոկտ.
Ժ. ՔՈՒՉԱՐԵԱՆ

# Ցեղասպանության հիշատակում Թաֆթս համալսարանում

**Ինա Բաղդիանց-Մկքաբեյի, հայոց պատմության եւ Զաքարյան ամբիոնի կազմակերպությամբ Մեդֆորդի (Մասաչուսեթս) Թաֆթս համալսարանի «Գոդար» մատուռում տեղի է ունեցել Մեծ եղեռնի 96-րդ տարելիցի հիշատակի մի միջոցառում, որի ընթացքում բանախոսությամբ հանդես է եկել «Հայաստանի երեխաները: Մոռացված ցեղասպանությունը եւ մեկ դար ձգվող պայքարը հանուն արդարության» գրքի հեղինակ Մայքլ Բոբելյանը:**

**Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում Թոմաս Նեշի լրատվության՝ Բոբելյանը խոսել է «Արդարության պահանջը Ուիլսոնից Օբամա» թեմայով, շեշտելով հատկապես այն թեզը, որ ժամանակին «Նյու Յորք թայմսի» առաջին էջերում հայտնված ամենակարեւոր լուրն առայժմ կարծես հետին պլան է մղվել կառավարության կողմից: Նա անդրադարձել է ցեղասպանությանը նախագահական եւ կոնգրեսական ճանաչմանն արժանացնելու հայերի պայքարի պատմությանը, հիշեցնելով ներկաներին այդ ընթացքում կատարված կարեւոր իրադարձություններից 69 գիտնականների 1985-ին ստորագրած նամակը, որով հաստատում էին, որ հայերի ցեղասպանությունը «պատմական փաստ է», եւ սենատոր Բոբ Դոուլի հանդիպումը 1990-ին նախագահ Ջորջ Բուշ կրտսերի հետ:**

**Դասախոսությունից հետո ներկաները վարդեր են դրել համալսարանի մատուռին կից զետեղված հուշատախտակին:**

Հ. Ծ.

# Հայերենի դասընթաց թուրքական համալսարանում

**Մայիսին Ստամբուլի թուրքական համալսարաններից մեկն առաջին անգամ հայերենի դասընթացներ է կազմակերպելու: Որպես տարածաշրջանում առաջընթաց տերություն՝ Թուրքիան կարիք ունի գործարարների, մտավորականների եւ լրագրողների, որոնք անգլերենից ու ֆրանսերենից շատ ավելին գիտեն, ըստ «Հյուրիեթ դեյլի նյուզի» ասել է Կադիր Հաս համալսարանից Սերդար Դինլերը:**

**Երեքշաբթի լուրը փոխանցող AFP գործակալությունը համառոտ իրազեկում է, թե Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները ծայրահեղ լարված են «թուրքական կոտորածների» պատճառով, Հայաստանը պահանջում է կոտորածները ցեղասպանություն ճանաչել, Թուրքիան մերժում է, երկու երկրները չունեն դիվանագիտական հարաբերություններ: Համալսարանում հայերենի առաջին դասընթացը կսկսվի մայիսի սկզբին: ԱՄՆ-ի «Մարշալ» հիմնադրամի միջոցներով ֆինանսավորվող նախագիծը մեկ տարում 5 դասընթաց է ներառում: Կադիր Հաս համալսարանը հունարենի եւ ռուսերենի դասընթացներ արդեն ունի եւ ծրագրում է դրանք համալրել քրդերենի, պարսկերենի ու արաբերենի դասընթացներով:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Դենվերի հայերը՝ համախմբված Մեծ Եղեռնի փոքրիկ հուշաքարի շուրջը

Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման արարողությունները կարող են տարբեր զգացումներ առաջացնել: Երբեմն էլ քսաներորդ դարասկզբի ողբերգության սարսափները թվագրվել են ոչ վաղ անցյալի հանցագործություններով, հայերի հանդեպ բռնությամբ:

Բաքվի ջարդերն իր հիշողության մեջ դժվար թե երբեւէ մոռացության տա հիսունհինգամյա **Յուրա Խաչատուրովը**, որ այդ ողբալի իրադարձություններից հետո առաջին հանգրվան ունեցավ Հյուսիսային Կովկասում: «Հինգ տարի անց եկա Միացյալ Նահանգներ կնոջս ու երկու երեխաներիս հետ», ասում է Յուրա Խաչատուրովը: Նա արդեն տասնութ տարի ապրում է ԱՄՆ Կոլորադոյի նահանգի կենտրոն Դենվեր քաղաքում:

Ներկարար Խաչատուրովի ներկայացմամբ՝ Դենվերում հայտնվել է տեղում բավականին ծանոթներ ունենալու պատճառով: «Մենք 1996-ին առաջին անգամ այստեղ կազմակերպեցինք Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման արարողություն», ասում է ԱՄՆ-ում իր կենսապայմաններով բավարարված Յուրի Խաչատուրովը: Նրա խոսքերով՝ Ադրբեջանից եկածները քիչ չեն Դենվերում:

Ծովի մակարդակից 1600 մետր բարձրության վրա գտնվող եւ ավելի քան 600 հզ. բնակչություն ունեցող Դենվերում ու մոտակայքում ապրող մոտ 1500 հայերի մեջ գերակշռում են համշենահայերը, ապա Ադրբեջանից գաղթածներն են: 2008-ի հունիսից Դենվեր տեղափոխված Զավեն քահանա Մարկոսյանի խոսքով, համայնքում նաեւ զգալի թվով բեյրութահայեր են, փոքրաթիվ են հայաստանցիները: Նախկինում հոգեւորական եւ եկեղեցի չունեցած Դենվերը միայն 2004-ից է այցելու հոգեւոր հովիվ ունեցել (ամսական մեկ անգամ) մինչեւ Տեր Զավենի ժամանումը: Ու թեեւ հիմա համայնքն ունի հոգեւոր հովիվ, դեռեւս չկա եկեղեցի:



Դենվերում՝ Կոլորադոյի նահանգապետարանի բակում որոշակի տարածք է հատկացված հայ համայնքին, ուր տեղադրված է Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին նվիրված մի հուշաքար: Ամեն տարի ապրիլ 24-ին կամ մոտ որեւէ այլ օր համայնքի ներկայացուցիչները հավաքվում են հուշաքարի մոտ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու նահատակներին իրենց աղոթքներով եւ ելույթներով:

«Արարողությունները ընդհանրապես հունական եկեղեցում էինք կատարում, բայց յուրաքանչյուր անգամ դժվար է հնարավորություն ստանալ պատարագ ունենալ այլ եկեղեցում», ասում է **Տեր Զավենը**: Նրա բացատրությամբ, այդ պատճառով էլ դեռեւս անեկեղեցի համայնքի արարողությունները արվում են տեղի գործարար հայերի տրամադրած մի սրահում, որտեղ վեմքարն է ու դրանով պատարագ է արվում: «Ցանկություն ունենք, որ կազմակերպվենք, եկեղեցի կառուցենք, բայց այս երկրում կառուցելն ավելի հեշտ է, քան հետագայում պահելը», ասում է Տեր Զավենը:

Այս տարի ապրիլի 23-ին հուշ ցերեկույթը Դենվերում բացվեց հոգեւոր հովիվ Զավեն քհն. Մարկոսյանի եւ ազգային առաջնորդարանից ավագ քահանա **Մեսրոպ Թաշչյանի** աղոթքով: Այդուհետեւ ընդհանուր գծերով ներկայացված Ցեղասպանության հարցի թեմայով բանախոսությունը ներկայացրեց **Հայկ Հովսեփյանը** (Ամերիկայի Հայ դատի հանձնախումբ՝ ANCA), շեշտադրելով տարբեր երկրների ղեկավարությունների կողմից Մեծ Եղեռնի հանդեպ դրսեւորված դրական ու բասացական մոտեցումները: Ելույթ ունեցավ նաեւ Կոլորադոյի սենատի անդամ **Լուիս Թոչտրափը**, որի ներկայացմամբ էլ Հայոց ցեղասպանության հիշատակի բանաձեւն ընդունվել է նահանգի սենատում:

«Ապրիլի 24-ի առավոտյան տասին հարության պատարագ սկսվեց, զատկական պատարագը, ավարտից հետո նորից մի խումբ կամավորներ այցելեցին հուշաքարին, ծաղիկներ դրվեցին», պատմում է Տեր Զավենը, որից հետո Չերրիքրիկ կոչվող լճի տարածքում զատկահանդես եղավ: «Մարդիկ տոնելով մեկը՝ չմոռացան մյուսը»:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կոլորադո, ԱՄՆ

# Հասան Աստվածաշնչի «մեկնաբանությանը»

Օրերս Իլհամ Ալիեւն այցելել է Ադրբեջանի գիտությունների ակադեմիա եւ տվել այսպիսի հստակ հանձնարարական. «Ադրբեջանական գիտությունը պետք է զարգանա եւ ծառայի ադրբեջանական պետության շահերին»:

Դա բավական էր, որ ոմն Աբաս Իսմայիլով հանդես գա «Արարատ լեռան առասպելը կամ Ուրարտուի ժառանգության հանդեպ իրավունքների մասին» հոդվածով: Ադրբեջանական «պատմագիտության հայտնագործություններով» ոչ ոքի այսօր չես զարմացնի: Փառք աստծո, որ աշխարհում կան ընդունված տեսակետներ: Ամենապարտառոցն այն է, որ ադրբեջանցի հեղինակն իրեն թույլ է տվել «մեկնաբանել» Աստվածաշունչը: «Աստվածաշնչյան տեքստի վերլուծությունն անառարկելիորեն վկայում է, որ Նոյի գերդաստանի եւ ջրհեղեղից փրկված կենդանիների ափ դուրս գալը չէր կարող տեղի ունենալ այն լեռան վրա, որն այսօր կոչվում է Արարատ»,- գրում է Իսմայիլովը:

Ի՞նչն է նրան հիմք տալիս նման սադրիչ հայտարարություն անելու: «Պարզվում է», որ ոչ թե Աստվածաշունչն է վկայում, որ Նոյյան տապանն իջել է Արարատ լեռան վրա, այլ «քրիստոնեական աշխարհն է ենթարկվել առասպելաբանողներին եւ հաշտվել հայերի հնարած ասքին, որ հատկապես այդ հրաբխային լեռան գագաթին է կանգ առել տապանը»: Իսկ ո՞րն է «հայերի հնարած ասքը»: Իսմայիլովի «մեկնաբանությամբ»՝ այն, որ «եթե Արարատը տեղաշրջանի ամենաբարձր լեռն է, ուրեմն միայն այնտեղ կարող էր իջեւանել տապանը»:

Բայց արդյո՞ք դա «հայերն են հնարել», թե՞ Աստվածաշնչում է վկայված: Իսմայիլովը «մեկնաբանում է», որ Աստվածաշնչում չի ասված, որ «տապանն իջեւանել է Արարատի վրա»: Այդուհետեւ ադրբեջանցի «գիտնականը», որի մասնագիտությունն ու աստիճանը նշված չեն, անցնում է «աստվածաշնչյան տեքստի մեկնաբանությանը»: Նա նույնիսկ ցուցադրում է ծովագնացությունից իր «խոր գիտելիքները», գծում Նոյ նահապետի «երթուղին»: Ըստ այդմ, նա նաեւ ինչ-որ «հաշվարկներ է անում», որոնց հիման վրա «ապացուցում է», թե քանի՞ մղոն հեռավորությունից Նոյը կարող էր տեսնել տեղաշրջանի ամենաբարձր լեռան՝ Արարատի՝ արդեն ջրերից ազատված գագաթը: Ընդ որում, Իսմայիլովը «տրամաբանում է», որ այն պահին, երբ Նոյը կարող էր տեսնել Արարատը, նա գտնվել է «անհամեմատ ավելի ցածր մակարդակի վրա»:

Ինչի՞ համար է այս ամբողջը: Մի բանի՝ որպեսզի «ապացուցի», որ «հայերը կեղծել են Աստվածաշունչը, իսկ քրիստոնյա աշխարհն էլ հավատացել է նրանց»: Իսկ ե՞րբ են հայերը «կեղծել»: Ըստ Իսմայիլովի՝ Աստվածաշնչի թարգմանության ժամանակ: Ստացվում է, որ Մաշտոցն ու աշակերտները, երբ հայերեն էին թարգմանում Սուրբ Գիրքը, «գիտեին», որ իրենցից հազար յոթ հարյուր տարի հետո լինելու է Արցախյան շարժում եւ այլն եւ այլն... Պարզապես անհեթություն: Աստվածաշնչի հայ թարգմանիչները միայն մի մտահոգություն ունեին՝ որպեսզի հայ մարդիկ Սուրբ Գրքի խոսքը իմանան հայերեն լեզվով: Եվ հայերեն առաջին նախադասությունն էլ գրել են. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Բայց տվյալ դեպքում այդ չէ ամենաէականը: Ադրբեջանական պաշտոնական «պատմագիտությունը» Նախիջեւան տեղանունը մեկնաբանում է որպես «Նախչըվան», որի համար էլ «գտնում ստուգաբանություն»՝ Նոյ չըխան՝ Նոյի ելնելու, դուրս գալու (իջման) վայր: Արդ, եթե Նոյյան տապանն Արարատի վրա «կանգ չի առել», ինչպես «ապացուցում է» Իսմայիլովը, ապա այսուհետեւ «Նախչըվան» տեղանունն ինչպե՞ս է «ստուգաբանվելու ադրբեջաներենով»:

Եվ, վերջապես, ի՞նչ կարիք կա տրվելու նման մտավարժանքների: Չէ՞ որ, անկախ այն բանից, թե որտեղ է իջել Նոյյան տապանը, ո՞վ է իրավասու լինել Ուրարտուի ժառանգորդը, հնագույն եւ նույնիսկ վաղ միջնադարյան ոչ մի աղբյուր, ոչ մի առասպել հեռավոր իսկ հուշում չունի, որ մեր տարածաշրջանում թուրքեր, առավել եւս՝ ադրբեջանցիներ են ապրել:

Թե՞ ադրբեջանցի «ուսումնասիրողը» հույս է դրել քրիստոնեական աշխարհի առհասարակ հանդուրժողականության վրա եւ դրա համար էլ ազատորեն ներխուժել Սուրբ Գրքի տեքստ ու «մեկնաբանել» յուրովի:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Շիմոն Պերեսը մերժեց Գյուլին

Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը մերժել է իր թուրք գործընկեր Աբդուլլահ Գյուլի հրավերը՝ մասնակցելու մայիսի 9-13-ը Ստամբուլում կայանալիք ՄԱԿ-ի՝ առավել թույլ զարգացած երկրների հիմնահարցերով 4-րդ համաժողովին: Թել Ավիվից տեղեկացրել են, որ Ստամբուլի համաժողովին Իսրայելը կներկայացվի «ավելի ցածր մակարդակով», քանի որ «այդ օրերին Իսրայելում նշվում է նահատակ զինվորների հիշատակման եւ Իսրայելի անկախության տարեդարձը, եւ նախագահը պետք է մնա երկրում»:

Հիշեցնենք, որ Ստամբուլի համաժողովի աշխատանքներին մասնակցելու համար Թուրքիայի նախագահը հրավեր է ուղարկել նաեւ Հայաստանի նախագահին: Այս կապակցությամբ նախագահի մամուլի քարտուղար Արմեն Արզումանյանը նշել էր. «Ստամբուլի համաժողովին ՀՀ նախագահի մասնակցության հարցը աշխատանքային կարգով քննարկվում է ՄԱԿ-ի համապատասխան ծառայությունների հետ»: Արզումանյանը, միեւնույն ժամանակ, ընդգծել էր, որ «առաջիկայում Թուրքիայի իշխանությունների հետ երկկողմ հանդիպումներ չեն նախատեսվում»:

Հ. Ա.

# Եգիպտոսցիների մեծ մասը դեմ է 1979 թ. եգիպտա-իսրայելական պայմանագրին

*Սինայում գազամուղ է պայթեցվել*

**Եգիպտոսում ամերիկյան «Փյու» հետազոտական կենտրոնի անցկացրած հարցման արդյունքները ցույց են տալիս, որ երկրի բնակիչների կեսից ավելին կուզենար չեղյալ հայտարարել Իսրայելի հետ 1979 թ. կնքված հաշտության պայմանագիրը: Հարցման մասնակիցների մեծ մասը նաեւ ծայրահեղ կասկածանքով է վերաբերվում ԱՄՆ-ին:**

**Հարցման արդյունքների համաձայն, եգիպտոսցիների միայն 36 տոկոսն է հավանություն տալիս եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագրին: Տապալված նախագահ Հոսնի Մուբարաքը կատարում էր 32 տարի առաջ ստորագրված այդ փաստաթղթի պայմանները, որը էական դեր է կատարում ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության մեջ:**

**ԱՄՆ-ի հանդեպ եգիպտոսցիների վերաբերմունքը մնում է բացասական. դրական վերաբերմունք է արտահայտել հարցման մասնակիցների միայն 20 տոկոսը (2010-ի 17 տոկոսի դիմաց):**

**22 տոկոսը կարծում է, որ ԱՄՆ-ը դրական ազդեցություն է գործել վերջերս Եգիպտոսում տեղի ունեցած քաղաքական գործընթացների վրա: 39 տոկոսը հակառակ կարծիքն ունի: 35 տոկոսի կարծիքով ԱՄՆ-ը չեզոք դիրք էր բռնել ժողովուրդ-իշխանություններ հակամարտության մեջ, ուստի աննշան դեր է խաղացել:**



**Ժողովուրդն առավել շատ (70 տոկոսից ավելի) վստահում է Մուբարաքի օրոք արգելված «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական կազմակերպությանը եւ «Ապրիլի 6» աշխարհիկ, ժողովրդավարական շարժմանը: Լայն պաշտպանություն է վայելում նաեւ բանակը, որը տապալեց Մուբարաքին եւ ներկայումս վերահսկում է երկիրը:**

**Ինչ վերաբերում է նախագահության թեկնածուներին, նոյեմբերյան նախագահական ընտրություններում ամենից շատ քվեներ (89 %) կարող է ստանալ Արաբական պետությունների լիգայի նախկին ղեկավար Ամր Մուսան: Ընդդիմության նախկին թեկնածու Այման Նուրը վայելում է հարցման մասնակիցների 70 տոկոսի, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր, բարեփոխական Մոհամմեդ էլ Բարադեյը՝ 57 տոկոսի պաշտպանությունը:**

**Բնակչության 65 տոկոսը գոհ է երկրի վիճակից: Անցյալ տարի այդ ցուցանիշը կազմել էր 28 տոկոս:**

**«Ամերիկայի ձայն» ռադիոկայանը հաղորդում է, որ երեկ զինված անձինք պայթեցրել են Եգիպտոս-Իսրայել գազամուղը: Եգիպտոսի անվտանգության ծառայությունները նշում են, որ վերջին ամիսներին սա երկրորդ հարձակումն է Էլ Արիշ քաղաքի (Հյուսիսային Սինայի նահանգ) մոտով անցնող գազամուղի վրա: Կրակի տարածում թույլ չտալու նպատակով իշխանությունները փակել են գազի հոսքը կարգավորող կափույրները:**

**Փետրվարի 5-ին գազամուղի մեկ ուրիշ հատվածում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով գազի արտահանությունը մի քանի շաբաթով ընդհատվել էր:**

**Եգիպտոսը գազ է արտահանում Իսրայել եւ Հորդանան, բայց մատակարարումների համաձայնագրերը վերջերս քննադատության էին ենթարկվել գազի ցածր գնի պատճառով:**

ԼԻԲԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

# Տրիպոլին Մոսկվային խնդրել է ՄԱԿ-ի ԱԽ արտակարգ նիստ հրավիրել

*Օբաման 25 մլն դոլար է հատկացնում լիբիացի ապստամբներին*



**Լիբիայի իշխանությունները Ռուսաստանին խնդրել են ՄԱԿ-ի ԱԽ-ի արտակարգ նիստ հրավիրել ՆԱՏՕ-ի գործողությունների քննարկման համար, որոնք լիբիական կողմը բնութագրում է որպես Արեւմուտքի նախահարձակում: Այդ մասին հաղորդում է լիբիական Ջանա լրատվական գործակալությունը:**

**Տրիպոլիում ենթադրում են, որ ԱԽ-ում քննարկման թեմա կդառնա «գաղութային ագրեսիան», որն ուղղված է Լիբիայի քաղաքացիական օբյեկտների եւ Մուհամմար Քադդաֆիի դեմ՝ ի խախտումն ՄԱԿ-ի ԱԽ-ի երկու բանաձեւերի եւ միջազգային համաձայնագրերի:**

**Լիբիացիները նաեւ խնդրում են անցկացնել Աֆրիկյան միության վեհաժողովի արտակարգ նիստ: Լիբիայի արտգործնախարար Աբդել Աթի Օբեյդին կոալիցիոն ուժերի հակալիբիական գործողություններն անվանել է «վերագաղութացման փորձ» եւ հասկացրել է, որ նման գործողություններից պետք է զգուշանա ամբողջ Աֆրիկան:**

**ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ Ռուսաստանը չի պաշտպանի ՄԱԿ-ի լիբիական նոր բանաձեւը, եթե դրա տեքստում տեսնի բռնության հետագա կիրառման նախադրյալներ:**

**«Եթե նոր բանաձեւը նախատեսի բռնության անհապաղ դադարեցում եւ բանակցելու կոչ, ապա Ռուսաստանն, անշուշտ, կպաշտպանի այն: Իսկ եթե բանաձեւը ենթադրի քաղաքացիական պատերազմի հետագա խորացում եւ ուժի կիրառություն, ապա մենք չենք կարող պաշտպանել», հայտարարել է Լավրովը:**

**Ավելի վաղ՝ ապրիլի 26-ին ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը հանդես էր եկել Քադդաֆիի պաշտպանությամբ, ասելով, որ համաշխարհային ընկերակցությունն իրավունք չունի սպանելու Լիբիայի ղեկավարին: Նա նկատի ուներ մասնավորապես Քադդաֆիին սպանելու ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի դիտավորությունը: Պուտինը Լիբիայի դեմ Արեւմուտքի ձեռնարկած ռազմարշավը անվանել է «խաչակրաց արշավանք», որի նպատակը աֆրիկյան այդ երկրի բնապաշարներն են:**

**Ինչ վերաբերում է բուն Լիբիայի իրավիճակին, կառավարական զորքերը երեկ հրթիռակոծել են Միսրատա քաղաքի նավահանգիստը, որտեղ վիրավորվել են աֆրիկյան այլ երկրներից եկած բանվորներ: Նավահանգիստը եւ քաղաքի մեծ մասը մնում են ապստամբների ձեռքին: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման կարգադրել է 25 մլն դոլար հատկացնել լիբիացի ապստամբներին օգնելու նպատակով: Խոսքը ռազմական օգնության մասին չէ: Ենթադրվում է, որ Ազգային անցումային խորհրդին կհանձնվեն մարդատար ավտոմեքենաներ, բենզատարներ, շտապ օգնության մեքենաներ, բուժսարքավորումներ, պաշտպանիչ համազգեստներ, հեռադիտակներ եւ այլ անհրաժեշտ առարկաներ:**

**«Ալ Ղաիդա» հեռուստաընկերության տվյալներով, ԱՄՆ-ի հատկացրած փողերը կօգտագործվեն նաեւ ապստամբներին հանդերձանքով եւ սննդով ապահովելու նպատակով:**

# Ամերիկացիների 44 տոկոսը կապիտալիզմը քրիստոնեությանը ներհակ է համարում

Ամերիկացիների 44 տոկոսը կարծում է, որ կապիտալիզմը եւ ազատ շուկայական տնտեսությունը հակասում են քրիստոնեական սկզբունքներին: 36 տոկոսը հակառակ կարծիքն ունի: Այս տվյալները հրապարակվել են համապատասխան հարցում անցկացրած Public Religion Research Institute-ի կայքում:

Մանրամասն վիճակագրական տվյալները զգալիորեն տարբերվում են՝ նայած հարցման մասնակիցների սեռին, տարիքին, եկամուտներին եւ քաղաքական հայացքներին: Այսպես, կապիտալիզմը քրիստոնեության հետ անհամատեղելի են համարում կանանց 50 տոկոսը եւ տղամարդկանց 37 տոկոսը: Դեմոկրատական կուսակցության համակիրների մեջ այս պնդմանը համամիտ է հարցման մասնակիցների 53 տոկոսը, համամիտ չէ 26 տոկոսը: Հանրապետական կուսակցության համակիրների մեջ, ընդհակառակը, առավել տարածված է այն կարծիքը, թե կապիտալիզմը համատեղելի է քրիստոնեության հետ (46 տոկոս), իսկ դրանց ներհակությանը հավատում է 37 տոկոսը:

Հարցման մասնակիցների 62 տոկոսը նաեւ համաձայն է այն պնդմանը, որ արդի Ամերիկայի գլխավոր խնդիրներից մեկը հարստության կուտակումն է սահմանափակ թվով մարդկանց ձեռքին:

Կաթոլիկների 61 տոկոսը, ավետարանչականների 51 տոկոսը եւ մյուս քրիստոնյաների 61 տոկոսը կարծում են, որ հոգեւորականները պետք է հայտարարություններ անեն տնտեսական խնդիրների, մասնավորապես հարուստների եւ աղքատների եկամուտների մեծ տարբերության առնչությամբ: Պահպանողական ամերիկացիների 61 տոկոսը շատ կարեւոր է համարում, որ հոգեւորականությունը բարձրացնի ուրիշ հարցեր (օրինակ, վիժեցումների հարցը):

# Ծանուցում

Ձեւ N1

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
**Առ 31.12.2010 թ.**

ծածկագիրը

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | «Մանռու» ՍՊԸ | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Խաղատուն | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 290.110.04030 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 01847701 |
| Չափի միավորը | | հազար դրամ |
| Գտնվելու վայրը | ՀՀ, ք. Երեւան, Սվաճյան 40-34 | |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ՀՀ Արարատի մարզ, գյուղ Արգավանդ | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | - | 50 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | - | 3750 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | - | 3800 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | - | 4292 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | - | 4292 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | - | 8092 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | - | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | - | 448 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | - | 498 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | - | 2494 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | - | 100 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 440 | - | 5000 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | - | 7594 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | - | 8092 |

Ձեւ N2

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**Առ 01.01.2011 թ.**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | - | 10885 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | - | (2937) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | - | 7948 |
| Վարչական ծախսեր | 050 | - | (7500) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | - | 448 |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | - | 448 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | - | 448 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | - | 448 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | - | 448 |

***Ղեկավար*** — ***Ա. Մանուկյան***
***Գլխավոր հաշվապահ*** — ***Ա. Կարապետյան***

### ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
**«ՄԱՆՌՈՒ» ՍՊԸ**
**2010 թ. տարեկան**
**ֆինանսական հաշվետվությունների աուդիտի**

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՄԱՆՌՈՒ» ՍՊԸ 2010 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները: Աուդիտը ներառում է ընկերության հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1-ը հունվարի 2011 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտը մեր կողմից իրականացվել է աուդիտորական գործունեության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ՀՀ օրենքներին, այլ իրավական ակտերին, աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին համապատասխան: Աուդիտի ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Մեր կողմից աուդիտի է ենթարկվել ընկերության 2010 թ. գործունեությունը հաստատող հաշվապահական հաշվառման այն սկզբնական փաստաթղթերի հաշվեքննումն ու համապատասխան ձեւակերպումների ճշտությունը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների տվյալները: Մենք գտնում ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է տալիս հետեւյալ եզրահանգման համար:

Մեր կարծիքով «ՄԱՆՌՈՒ» ՍՊԸ 2010 թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներ, բոլոր էական առումներով, տալիս են ընկերության 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին՝ ճշմարիտ ու իրական պատկերը:

***«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ***
***տնօրեն/աուդիտոր*** — ***Հ. Դանիելյան (աուդիտորի որակավորման վկայական թիվ 068)***

***07 փետրվարի, 2011 թ.***

Ձեւ N1

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
**Առ 31.12.2010 թ.**

ծածկագիրը

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | «Տրոյա Պալաս» ՍՊԸ | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Խաղատուն | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 282.110.05144 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 00858775 |
| Չափի միավորը | | հազար դրամ |
| Գտնվելու վայրը | ՀՀ, ք. Երեւան, Մոլդովական 50/6 շ., բն. 18 | |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժի | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 833 | 625 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 833 | 625 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 92 | - |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 1812 | 10297 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 1904 | 10297 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 2737 | 10922 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | 1103 | 8596 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 1153 | 8646 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 1474 | 2192 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 110 | 84 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 1584 | 2276 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 2737 | 10922 |

Ձեւ N2

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**Առ 01.01.2011 թ.**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 49732 | 44670 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (21357) | (11846) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 28375 | 32824 |
| Վարչական ծախսեր | 050 | (14160) | (25331) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 14215 | 7493 |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 14215 | 7493 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 14215 | 7493 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 14215 | 7493 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 14215 | 7493 |

***Ղեկավար*** — ***Ա. Զարգարյան***
***Գլխավոր հաշվապահ*** — ***Ա. Կարապետյան***

### ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
**«Տրոյա Պալաս» ՍՊԸ**
**2010 թ. տարեկան**
**ֆինանսական հաշվետվությունների աուդիտի**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Տրոյա Պալաս» ՍՊԸ 2010 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները: Աուդիտը ներառում է ընկերության հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1-ը հունվարի 2011 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտը մեր կողմից իրականացվել է աուդիտորական գործունեության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ՀՀ օրենքներին, այլ իրավական ակտերին, աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին համապատասխան: Աուդիտի ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Մեր կողմից աուդիտի է ենթարկվել ընկերության 2010 թ. գործունեությունը հաստատող հաշվապահական հաշվառման այն սկզբնական փաստաթղթերի հաշվեքննումն ու համապատասխան ձեւակերպումների ճշտությունը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների տվյալները: Մենք գտնում ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է տալիս հետեւյալ եզրահանգման համար:

Մեր կարծիքով «Տրոյա Պալաս» ՍՊԸ 2010 թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներ, բոլոր էական առումներով, տալիս են ընկերության 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին՝ ճշմարիտ ու իրական պատկերը:

***«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ***
***տնօրեն/աուդիտոր*** — ***Հ. Դանիելյան (աուդիտորի որակավորման վկայական թիվ 068)***

***09 փետրվարի, 2011 թ.***

## Կորել է

Հակոբ Միհրանի Էֆիզլարյանին Երեւանի «Հայբուսակ» համալսարանի կողմից 2006 թվականի հուլիսի 1-ին ստոմատոլոգիա մասնագիտությամբ տրված AD N044603 դիպլոմը (գրանցման համարը 104):

Համարել անվավեր:

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում**

**www.azg.am**

Ձեւ N 1

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
**01/01/11 թ.**

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | «Խասաս» ՍՊԸ | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Շահումով խաղի կազմակերպում | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 27111002835 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 01236089 |
| Չափի միավորը | | հազար դրամ |
| Գտնվելու վայրը | Կոտայքի մարզ, գյուղ Գառնի | |
| փաստացի գործունեության իրականացման վայրը | ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժի, բնակելի կառուցապատման հողամաս տնտեսական շինությունով: ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, Նոր թաղամաս 1 փող., 57 հողամաս, 1-ին տնտեսական շինություն | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 248.0 | |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 020 | 11883.0 | 5416.0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 12131.0 | 5416.0 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 224.0 | 144.3 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 50.0 | |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 14527.0 | 6206.7 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 14801.0 | 6351.0 |
| Հաշվեկշիռ | 230 | 26932.0.0 | 11767.0 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50.0 | 50.0 |
| Կուտակված շահույթ | 270 | 6426.0 | 9440.0 |
| Պահուստային կապիտալ | 280 | 2277.0 | 2277.0 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 8753.0 | 11767.0 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | 10392.0 | |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 10392.0 | 0.0 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 7500.0 | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական | 420 | 287.0 | |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 7787.0 | 0.0 |
| Հաշվեկշիռ | 500 | 26932.0 | 11767.0 |

Ձեւ N 2

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**01/01/10-01/01/11**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 231944.0 | 213344.0 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | 131979.0 | 115086.0 |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 99965.0 | 98258.0 |
| Վարչական ծախսեր | 050 | 98820.0 | 92024.0 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 1145.0 | 6234.0 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | 77.0 | |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 1068.0 | 6234.0 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | 1336.0 | 941.0 |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | 268.0 | (2279.0) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | - | 3014.0 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | - | 3014.0 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | - | 3014.0 |

***Ղեկավար՝*** — ***ԱՐՄԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ***

### Աուդիտորական եզրակացություն

*«Խասաս» ՍՊԸ ղեկավարությանը*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Խասաս» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերության) հաշվապահական հաշվեկշիռը 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն ՀՀՀՀՍ-երի:

***«ԱՎԱ-Աուդիտ փարթներս» ՍՊԸ***
***Տնօրեն*** — ***Ա. Պողոսյան***
***Աուդիտոր*** — ***Ա. Պողոսյան***
***Երեւան***
***03 ապրիլի 2011 թ.***

Ձեւ N 1

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
**առ 01/01/11 թ.**

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | «Լենդ-Գեյմ» ՍՊԸ | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Շահումով խաղի կազմակերպում | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 26411008996 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 00102421 |
| Չափի միավորը | | հազար դրամ |
| Գտնվելու վայրը | ՀՀ, ք. Երեւան, Ա. Խաչատրյան 29, բն. 25 | |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար-Թաիրով, Ազնավուրի 27բ, առեւտրի եւ սպասարկման սրահ | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | | 2083.0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | | 2083.0 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | | 249.0 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | | 249.0 |
| Հաշվեկշիռ | 230 | | 2332.0 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | | 10.0 |
| կուտակված շահույթ | 270 | | (13754.0) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | | (13744.0) |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 0.0 | 0.0 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | | 14800.0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | | 1165.0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական | 420 | | 111.0 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | | 16076.0 |
| Հաշվեկշիռ | 500 | | 2332.0 |

Ձեւ N 2

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**01/01/10-01/01/11**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | | 7404.5 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | | 4409.1 |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | | 2995.4 |
| Վարչական ծախսեր | 050 | | 16729.2 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | | (13733.8) |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | | 20.0 |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | | (13753.8) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | | (13753.8) |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | | (13753.8) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | | (13753.8) |

***Ղեկավար՝*** — ***Ա. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ***

### Աուդիտորական եզրակացություն

*«Լենդ-Գեյմ» ՍՊԸ ղեկավարությանը*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Լենդ-Գեյմ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերության) հաշվապահական հաշվեկշիռը 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն ՀՀՀՀՍ-երի:

***«ԱՎԱ-Աուդիտ փարթներս» ՍՊԸ***
***Տնօրեն*** — ***Ա. Պողոսյան***
***Աուդիտոր*** — ***Ա. Սիրեկանյան***
***Երեւան, 07 ապրիլի 2011 թ.***

# «Շիրակը» մտավ եզրափակիչ

Հայտնի դարձավ ֆուտբոլի Հայաստանի գավաթի եզրափակիչի 2-րդ մասնակիցը: Մայիսի 11-ին «Միկայի» հետ մրցավեճում Հայաստանի գավաթը կվիճարկի Գյումրիի «Շիրակը»: Շիրակցիները կիսաեզրափակիչի պատասխան խաղում երեկ «Հրազդանում» վստահ ռեւանշի հասան ուլիսցիների նկատմամբ, որոնց առաջին հանդիպման ժամանակ զիջել էին 0-1 հաշվով: Եզրափակիչի 2-րդ ուղեգրի տիրոջը որոշելու համար պահանջվեց լրացուցիչ ժամանակ:



Առաջին խաղի հաշիվը ստիպել էր գյումրեցիներին առաջին րոպեներից դիմելու գրոհների: Իսկ «Ուլիսը» մեծ ուժերով պաշտպանվում էր: Հաշիվը բացվեց 29-րդ րոպեին, երբ ձախ եզրից Դավիթ Հակոբյանի փոխանցումը դիպուկ հարվածով եզրափակեց Հովհաննես Գրիգորյանը: Քիչ անց «Ուլիսից» հեռացվեց Լեւան Ակոբիան ու դաշտի տերերի վիճակն ավելի ծանրացավ:

Ընդմիջումից հետո խաղի պատկերը փոխվեց: Ուլիսցիները զգալիորեն ակտիվացան՝ փորձելով հավասարեցնել հաշիվը: Գոլային լավ պահեր ունեցան Նորայր Սահակյանն ու Գեւորգ Նրանյանը, սակայն նրանց հարվածները հետ մղեց «Շիրակի» դարպասապահ Իգոր Լոգվինովը: Հիմնական ժամանակում 1-0 հաշիվը մնաց անփոփոխ, ուստի նշանակվեց լրացուցիչ 30 րոպե: Այստեղ կրկին հաջողությունն ուղեկցեց շիրակցիներին: 97-րդ րոպեին Մկրտիչ Նալբանդյանը խփեց հանդիպման վճռորոշ գոլը, որը «Շիրակին» եզրափակիչի ուղեգիր պարգեւեց: «Շիրակը» 4-րդ անգամ իրավունք ստացավ վիճարկելու ՀՀ գավաթը: Վերջին անգամ «Շիրակը» եզրափակիչում հանդես էր եկել 1999-ին: Նշենք, որ առայժմ շիրակցիներին չի հաջողվել գավաթակիր դառնալ:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են հայտնել:

**Ֆելիքս Խոջոյան** («Շիրակ»)- Շատ հետաքրքրական խաղ ստացվեց: Շնորհավորում եմ տղաներին եզրափակիչի ուղեգրի նվաճման առթիվ: Առաջին խաղակեսում առավելություն ունեինք, կարող էինք մի քանի գոլ խփել: Երկրորդում էլ վատ հանդես չեկանք: Ընդհանուր առմամբ տղաներից գոհ ենք: Եզրափակիչում մրցակիցների հնարավորությունները հավասար եմ գնահատում: Ցավոք, որոշ ֆուտբոլիստներ վնասվածքներ ունեն: Մասնավորապես, թիմի ավագ Հովհաննես Թահմազյանը դժվար թե վերականգնվի մինչեւ եզրափակիչ հանդիպումը:

**Սեւադա Արզումանյան** («Ուլիս»)- Շնորհավորում եմ «Շիրակին» եզրափակիչ մտնելու առթիվ, նաեւ «Միկային», որն ավելի շուտ էր նվաճել այդ իրավունքը: Մենք դեռ պետք է վերլուծենք այս խաղի անհաջողությունների պատճառները: Մեզ չհաջողվեց պահպանել մեկ գնդակի առավելությունն ու եզրափակիչ մտնել: Դրան գումարվեց նաեւ այն, որ այսօր մեր ֆուտբոլիստներից երկուսը հեռացվեցին դաշտից ու չեն կարող մասնակցել առաջնության հաջորդ խաղին:

# Կլիչկոն եւ Հեյը հաստատել են իրենց մասնակցությունը

Նյու Յորքում կայացել է գերծանրքաշային կարգում WBO-ի եւ IBF-ի վարկածներով աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կլիչկոյի ու WBA-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր Դեւիդ Հեյի հանդիպումը լրագրողների հետ, որի ընթացքում բռնցքամարտիկները քննարկել են հուլիսի 2-ին Գերմանիայում կայանալիք մենամարտին վերաբերող մի շարք հարցեր:



Կլիչկոն Հեյին հիշեցրել է, որ վերջինս հրաժարվել էր իր հետ մենամարտելուց. «Ես առաջիկա մենամարտի կայացմանը չեմ հավատա այնքան ժամանակ, մինչեւ որ աչքերովս չտեսնեմ Հեյին ռինգում: Փառք Աստծո, որ նա առաջինը պետք է ռինգ դուրս գա: Եթե նրան տեսնեմ ռինգում, այդ ժամանակ նոր ռինգ դուրս կգամ»

Հեյը խոստացավ, որ հենց այդպես էլ կլինի եւ իր հերթին հիշեցրեց, որ Կլիչկոն վերջին շրջանում 2 անգամ հրաժարվել է մենամարտից վնասվածքի պատճառով. «Ես նույնպես մտահոգված եմ այն հարցով, թե արդյոք Կլիչկոն ռինգ դուրս կգա՞: Երկուսս էլ մտադիր ենք ժամանել մենամարտին: Այնպիսի զգացում ունեմ, որ դու ցանկանում ես հաղթել: Գիտեմ, որ ես եմ հաղթելու: Լիովին համոզված եմ, որ նոկաուտի կենթարկեմ քեզ: Կարծում եմ, որ դու եւս այդպես ես մտածում: Երկուսս էլ ռինգ դուրս կգանք, հիանալի մենամարտ կհրամցնենք մարզասերներին՝ երջանկացնելով նրանց: Հանդիսականները ցանկանում են դիտել իմ մենամարտը կրտսեր Կլիչկոյի՝ Վլադիմիրի հետ: Եթե հարցում անցկացվեր, 90 տոկոսն իրենց ձայնը կտային Վլադիմիրի օգտին: Ես ռինգ եմ դուրս գալիս ուժեղագույնների հետ մրցելու համար եւ սա այդ դեպքն է: Առաջիկա մենամարտն այժմ ավելի արժեքավոր է, քան եթե կայանար երկու տարի առաջ: Տարիների ընթացքում ավելի եմ ուժեղացել, զգալի փորձ եմ ձեռք բերել: Այնպես որ անհամբերությամբ եմ սպասում մենամարտին, որպեսզի ցույց տամ, թե ինչի եմ ընդունակ»:

Կլիչկոն Հեյին բնութագրել է որպես վիժվածք, նշելով, որ հիացած չէ Օդլի Հարիսոնի եւ Նիկոլայ Վալուեւի հետ բրիտանացի բռնցքամարտիկի անցկացրած մենամարտերով: Ի պատասխան, Հեյը հետեւյալն է նշել. «Քո հետ մենամարտելու առիթը մարդկանց ցանկությունն է քեզ տեսնել նոկաուտի ենթարկված, որպեսզի գերծանրքաշային կարգում կրկին դիտարժան հանդիպումների ականատես դառնան: Դու եւ եղբայրդ սպանել եք գերծանրքաշային կարգը: Ես կփրկեմ այդ կարգը դժգույն մենամարտերից: Ես մշտապես ցանկացել եմ ապացուցել, որ ուժեղագույնն եմ աշխարհում: Եվ ահա եկել է ապացուցելու ժամանակը»:

Դեւիդ Հեյը չի հրաժարվում իր նախկին ծրագրից, ըստ որի այս տարվա հոկտեմբերին մտադրվել է հրաժեշտ տալ ռինգին: Հոկտեմբերին կլրանա Հեյի 31-ամյակը: Նա նշել է, որ այդ ժամկետը նշանակել էր երիտասարդ տարիքում: Եվ եթե կարողանում ես ծրագրած բարձունքները նվաճել, ապա կարելի է նշված ժամկետում հեռանալ ռինգից:

# Արձագանք «Արկադի Անդրեասյանը հարվածել է ֆոտոլրագրողին» հոդվածին

**Շատ-շատ տհաճ, անսազական, անթույլատրելի արարք: Ամոթ եւ ամոթ:**

**Սակայն ուզում եմ շնորհակալություն ասել Արկադի Անդրեասյանին, որ այս արարքով նա ինձ մի պահ հնարավորություն տվեց վերապրել 70-ական թվականների զգացմունքները...**

**Զարմանալի է, բայց մի պահ ես ինձ զգացի այն հեռավոր տարիներին, երբ Անդրեասյանը մեզ եւ ուրախացնում էր, եւ տխրեցնում իր անդաստիարակությամբ:**

**Կարծում եմ, որ Անդրեասյանը պիտի լավ հիշի, որ ինչպես «Արարատ-73»-ը դարձավ մեր ժողովրդի պարծանքը, այնպես էլ «Արարատ-73»-ը «աստղային» հիվանդությամբ տառապելով, սկիզբ դրեց հայկական ֆուտբոլի կործանմանը:**

ՎԱԼԵՐԻ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ՍԱՄԲՈ

# Ուժերի ստուգատես Եվրոպայի առաջնությունից առաջ

**Վանաձորի «Հայաստան» մարզական միության մարզադահլիճում սամբոյի հանրապետության չեմպիոնի կոչումը վիճարկեցին Հայաստանի տարբեր մարզերի եւ Արցախի 113 սամբիստներ: Քաշային 9 կարգերում բավական համառ մրցապայքար էր ծավալվել առաջնության պարգեւների համար:**

**Մինչեւ 52 կգ քաշային կարգում եզրափակիչում հանդիպեցին վանաձորցի Տիգրան Կիրակոսյանն ու աբովյանցի Աղասի Նազունցը: Ավելի ուժեղ գտնվեց վանաձորցի սամբիստը, որն էլ արժանացավ չեմպիոնի տիտղոսին: Բրոնզե մրցանակակիրներ դարձան վանաձորցի Աշոտ Հովսեփյանն ու գյումրեցի Գրիգոր Մխիթարյանը:**

**Քաշային հաջորդ երկու կարգերում ուժեղագույնը գյումրեցի մարզիկներն էին: Մինչեւ 57 կգ քաշային կարգում Վահան Վարդանյանը հաղթեց վանաձորցի Արեն Անտոնյանին, իսկ մինչեւ 62 կգ քաշայինների մրցավեճում Փայլակ Վարդազարյանը պարտության մատնեց վանաձորցի Տիգրան Վարոսյանին: Մինչեւ 68 կգ քաշային կարգում հաջողությունն ուղեկցեց աբովյանցի Անդրանիկ Նաղդալյանին, որը շահեց վանաձորցի Արմեն Սաքանյանի հետ մենամարտը:**

**Մինչեւ 74 կգ քաշային կարգում իր հավասարը չուներ մեր ամենատիտղոսակիր սամբիստներից մեկը՝ Աշոտ Դանիելյանը: Արցախցի սամբիստը եզրափակիչում հաղթեց գյումրեցի Հակոբ Մարգարյանին: Քաշային հաջորդ կարգում (82 կգ) հաղթողը կրկին Արցախի ներկայացուցիչն էր՝ Մավրիկ Նասիբյանը, որը վճռորոշ գոտեմարտում առավելության հասավ աբովյանցի Արամ Հարությունյանի նկատմամբ:**

**Երեւանցի սամբիստներից միայն Արմեն Իսպիրյանին հաջողվեց կանգնել պատվո պատվանդանի վերին աստիճանին: Մինչեւ 90 կգ քաշային կարգում Արմենը եզրափակիչում հաղթեց աբովյանցի Միքայել Շահնազարյանին:**

**Մինչեւ 100 կգ քաշայինների մրցավեճը շահեց աբովյանցի Արսեն Բիլյանը՝ հաղթելով երեւանցի Տիգրան Անտոնյանին: Իսկ գերծանրքաշային կարգում չեմպիոն հռչակվեց Նոր Հաճընի ներկայացուցիչ Հովհաննես Մուրադյանը, որի մրցակիցը վանաձորցի Էդուարդ Ղուբասյանն էր:**

**Առաջնության արդյունքներով կկազմավորվի սամբոյի Հայաստանի հավաքականը, որը կմասնակցի մայիսի 12-16-ը Բուլղարիայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը:**

# Հայ պատանիների առաջին հաղթանակը

**Ղազախստանի նախագահի գավաթի մրցաշարի 2-րդ խաղում ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը 2-0 հաշվով հաղթեց ուկրաինացիներին: 7-րդ րոպեին հաշիվը բացեց Վարդան Բակալյանը, 28-րդ րոպեին Արամայիս Քյոսայանը 2-րդ գնդակը խփեց:**

**Տուրի մյուս խաղում Թուրքիայի հավաքականը 2-1 հաշվով հաղթեց վրացիներին, որոնք մեկնարկային տուրում 5-3 հաշվով հաղթել էին հայ պատանիներին: 2 տուրից հետո մրցաշարի մասնակից 4 թիմերն էլ ունեն 3-ական միավոր: Վաղը մրցաշարի ավարտական խաղում Հայաստանի հավաքականը կմրցի թուրքերի հետ:**

# Առաջին պարտիայում՝ ոչ-ոքի

**Շախմատի ԱՄՆ-ի առաջնությունում կայացան եզրափակիչ մրցախաղերի առաջին պարտիաները: Տաթեւ Աբրահամյանը սպիտակներով հաշտություն կնքեց Աննա Զատոնսկիխի հետ: Իսկ տղամարդկանց եզրափակիչի առաջին պարտիան ավարտվեց Գատա Կամսկու հաղթանակով, որը սպիտակներով պարտության մատնեց Յուրի Շուլմանին:**

# Մեդալ նվաճել չհաջողվեց

**Հայ ձյուդոյիստները ձեռնունայն վերադարձան Ստամբուլում անցկացված Եվրոպայի առաջնությունից: Մեր 6 ձյուդոյիստներից ոչ մեկին չհաջողվեց մեդալ նվաճել: Մրցումների վերջին օրն անհաջողության մասնվեցին նաեւ Արսյոմ Բաղդասարյանը (73 կգ) եւ Հակոբ Առաքելյանը (100 կգ): Արսյոմը 1-ին փուլում ռումինացի Ադրիան Մերգեին հաղթելուց հետո հաջորդ գոտեմարտում պարտվեց վրացի Ամբակո Ավալիանիին: Իսկ Առաքելյանը պայքարից դուրս մնաց հենց առաջին փուլում՝ զիջելով Իսրայելի ներկայացուցիչ Արիել Զեեւիին:**

**Ստամբուլում բոլորից հաջող հանդես եկան ֆրանսիացիները՝ նվաճելով 4 ոսկե, 2 արծաթե եւ 3 բրոնզե մեդալ: 2-րդ տեղում ռուսներն են (1+2+5):**

# «Մանչեսթեր Յունայթեդի» լուրջ հայտը

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» ֆուտբոլիստները չեմպիոնների լիգայի եզրափակիչի ուղեգրի լուրջ հայտ ներկայացրին: Կիսաեզրափակիչի առաջին խաղում անգլիական ակումբը հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթեց «Շալկե-04-ին»: Երկրորդ խաղակեսում ընդամենը 2 րոպեի ընթացքում Ռայան Գիգզն ու Ուեյն Ռունին գրավեցին մրցակցի դարպասը:



Թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին է:

**Ալեքս Ֆերգյուսոն** («Մանչեսթեր Յունայթեդ»)- Մենք հիանալի խաղ ցուցադրեցինք, ֆուտբոլիստները վարպետորեն կատարեցին իրենց գործը: Զգում էի, որ վաղ թե ուշ գոլ ենք խփելու: 1997-ի համեմատ, երբ պարտվեցինք Դորտմունդի «Բորուսիային», մենք զգալի փորձ ենք կուտակել: Շատ հաճելի է գերմանական ակումբին հաղթելը: Մենք նախկինում էլ եվրոգավաթներում հյուրընկալվելիս հաղթել էինք, սակայն այս հաջողությունը ամենաարժեքավորներից է:

**Ռալֆ Ռանգնիկ** («Շալկե-04»)- Առաջին 15 րոպեներին հավասար խաղ էր ընթանում: Դրանից հետո սկսեցինք սխալներ թույլ տալ, մրցակցի գրոհները սպառնալից դարձան: Պետք է շնորհակալ լինենք Մանուել Նոյերին, որ մինչեւ ընդմիջում դարպասն անառիկ պահեց: Հնարավոր է, որ մրցակիցը կարծում է, թե արդեն նվաճել է եզրափակիչի ուղեգիրը: Պատասխան խաղում մենք այլեւս կորցնելու ոչինչ չունենք:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

